

Սպարտակ ՂԱՐԱԲԱՂՅԱՆ

ԱՊԱՇԽԱՐԱՆՔ

– Մոմե՛րը, մոմե՛րը մարե, երթանք,– տեր հոր բամբ ձայնն էր, որ արձագանքեց դատարկ սրահում:

Ժամկոչը չհավատաց լսածին. կարծես ուրիշի ձայնն էր եկեղեցում: Քիչ առաջ այս ձայնը հավատացյալներին Սուրբ գրքից խրատներ ու խորհուրդներ էր քարոզում և ուրիշ ձայն էր՝ երկնային...

Տեսնելով, որ ժամկոչը անտարբեր մնաց կամ չլսեց, տեր հայրը նորից կրկնեց.

– Խուլցա՞ր:

– Խուլ չեմ, տեր հայր, լսածիս չհավատացի... մոմերը մարե՞մ...

– Մարե՛, մարե՛... երթանք...

Ժամկոչը նայեց վառվող մոմերին, ձեռքը տարավ, արանքներում արդեն մարմրող մի քանի մոմերը հավաքեց, հետո նայեց նոր-նոր վառված բոցկլտացող մոմերին, մեղավորի պես հետ տարավ ձեռքն ու հրաժարվեց տեր հոր հրամանը կատարել.

– Անհարմար է, տեր հայր, մինչև վերջ թող այրին ասոնք...

Աստծո տուն մտնելեն ետք ասոնք այլևս մոմեր չեն:

– Հաբա ի՞նչ են,– նետեց տեր հայրը...

– Աղոթք են, սիրածին հասնելու մուրազ են, արու զավակ ունենալու փափագ են...

– Անկյունում բոցկլտացող մոմե՞րն ալ...

Ժամկոչը հասկացավ տեր հոր ակնարկը: Անկյունինը անառակ կնոջ մոմերն էին...

– Անոնք ալ ապաշխարանքի մոմեր են:

– Ապաշխարանքի՞,– արհամարհանք կար տեր հոր ձայնի մեջ:

– Աստծո առաջ բոզն ալ, անառակն ալ, խաբեբան ալ... բոլորը, բոլորն ալ հավատացյալ են...

Ժամկոչից գինի էր բուրում: Գինու բուրմունքը տեր հորը հուշեց ասելիքը.

– Մոմի կարևոր-անկարևորի մասին ինծի քարոզ մի՛ կարդա: Լավ է ըսես՝ ի՞նչ եղան եկեղեցուն նվիրած գինիները:

Ժամկոչը տեր հոր ակնարկը հասկացավ՝ իր բաժինն էր ուզում... Հետո մեղք խոստովանողի պես ավելացրեց.

– Գայթակղեցա, տե՛ր հայր: Անգամ մը, եթե բերեն, ամենը քեզի կու տամ...

Տեր-հայրը փրփրեց.

– Ալ կբավե. Սրբազանին պիտի ըսեմ...

Գինին ժամկոչին ավելի համարձակ էր դարձրել, ու նա էլ գրեթե նույն տոնով պատասխանեց.

– Ես ալ ըսելիք ունիմ Սրբազանին...

– Ի՞նչ պիտի ըսես,– հեգնախառն ժպիտով հարցրեց տեր հայրը...

– Օրը կուգա, կըսեմ...

Տեր հայրը, վստահ, որ ժամկոչի ասածը փուչ խոսքեր են, ինքնավստահ ասաց.

– Ասորմե լավ օր չկա, ըսե նայիմ...

– Դուն Սրբազանին ի՞նչ պիտի ըսես, որ գինի՞ կսիրեմ...

– Սիրելը մե՛ղք է, գինեմոլ ես, պիտի ըսեմ...

– Դուն ալ,– ժամկոչը հազիվ զսպեց իրեն ու լեզուն խածածի պես լռեց.

– Ըսե, ըսե... և ալ ի՞նչ...

Ժամկոչը խորհրդավոր լռեց ու տեր հորը ասես խնայելով՝ հարցրեց.

– Ըսե՞մ, տեր հայր...

– Ըսե, ըսե,– անտաբեր քամահրանքով պատասխանեց տեր հայրը...

– Դուն ալ եկեղեցուն նվիրած մետաքսը ուրիշ բանի համար գործածեր ես:

Քար լռություն տիրեց: Տեր հայրը հայացքը աջ ու ձախ տնտղեց, ասես ուզում էր վստահ լինել, հո ուրիշ մեկը չլսե՞ց: Կաս-կարմիր կտրեց, ասես գինին ոչ թե ժամկոչը, այլ ինքն էր խմել... Հետո հանցանքի մեջ բռնվածի պես գրեթե շշուկով հարցրեց.

– Ո՞վ ըսավ:

– Դերձակը,– պատասխանեց ժամկոչը:

– Դերձա՞կը... ի՞նչ ըսավ...

– Ըսավ երեցկնոջ համար ազնիվ մետաքսեն աղվոր գիշերանոց ու...

Տեր հայրը ընդհատելով անկապ հարցրեց.

– Տեսա՞ր...

– Ի՞նչը,– զարմացավ ժամկոչը:

– Գիշերանոցը, վարտիքը...

– Ես ինչո՞ւ պիտի տեսնեմ: Վարտիքը, գիշերանոցը հանող-հագցնողի աչքը լույս: Մեղա՜... մեղա՜...

Եկեղեցու բոլոր մոմերը գրեթե մարել էին, կամ էլ վերջին առկայծումներն էին աջ-ձախ թռչկոտում...

Միայն հեռավոր անկյան անառակ կնոջ ապաշխարանքի մոմերն էին անմար բոցկլտում...

Այս ինչքա՜ն մեղք կա աշխարհում...

ԿԱՐԱՆՏԻՆ

Բզկտված Հայաստանից մնացած այս տարածքը այն տարիներին Սովետական Հայաստան էր կոչվում: Հենց էդ «Սովետական» բառը, անունը համայնավար Մարգարին գայթակղեց, ոգևորեց, ստիպեց, որ 1947-ին հավաքի ունեցած-չունեցածը, ձգի Լիբանանն ու գա, բնակվի մեր թաղում: Կնոջ՝ Ազատուհու դաշնակցական եղբայրներին մերժեցին, թույլ չտվեցին, արգելեցին ներգաղթել, որովհետև Հայաստանը Սո-վե-տա-կան էր...

Սովետների երկրում Մարգարին կուլակաթափ արեցին. եղած-չեղածը ձեռքից առան ու հետը բերած թոփ-նոր բեռնատար հինգ մեքենաներից միայն մեկը «թողեցին» նրան: Մարգարին ձևակերպեցին վարորդ միայն մի պայմանով. ամեն օր, աշխատանքային օրվա վերջում մեքենան կայանվի «գարաժում»...

Քաղաքից կտրված, հեռու, անտեր ու անխնամ տարածք էր «գարաժ» ասվածը՝ անծածկ, անկտուր: Ամեն գիշեր Մարգարը մեքենան հասցնում էր գարաժ, կայանում իր իսկ բերած մյուս բեռնատարների կողքին ու տխուր, գորովալից, թաքուն ափսոսանքով նայում նրանց, ինչպես արաբն իր գերեվարված ազնվացեղ նժույգներին կնայեր:

Տուն էր վերադառնում ոտքով: Նույն ճանապարհը առավոտ կանուխ էլի ոտքով պիտի գնար՝ հասնելու «գերեվարված նժույգին»:

Ազատուհին աչք չէր փակում մինչև ամուսինը չվերադառնար: Մարգարի հոգնած ու վիատ վիճակը տեսնելով՝ հիշեցնում էր.

– Եղբայրներս հազար ըսին՝ մի՛ երթար, Մարգա՛ր, քու գիտցած համայնավարները չեն հոն, քու գիտցած երկիրը չէ՛:

Մտիկ չըրիր, ականջ չկախեցիր՝ ինչ է թե, եղբայրներս էին ըսողը:

Մարգարը հազար անգամ լսել էր այս խոսքերը և այս անգամ էլ համբերատար լսեց, չարձագանքեց: Մի կենտ բառ ասաց.

– Անոթի եմ,– ու հայացքը նետեց կողք կողքի քնած երեխաներին: Վեցն էին, յոթերորդին սպասում էին՝ էսօր-էգուց էր:

Ընթրիքի աղքատիկ սեղանի շուրջ երկուսով էին: Ազատուհին հուշերով լրացնում էր պակասը:

– Մարգա՛ր,– դիմեց ամուսնուն,– գիտե՞ս՝ ինչ հիշեցի:

– Ի՞նչ,– մեղմ հարցրեց Մարգարը:

– Կհիշե՞ս, երբ Բաթում հասանք, նավին վրա պրոպագանդիստ մը ելավ, հայ թարգմանիչ կար հետը...

– Կհիշեմ,– ասաց Մարգարը:

– Կիիշե՞ս՝ ինչ ըսավ:

– Ի՞նչ:

– Ըսավ՝ ուտելիք-մուտելիք, ինչ ունեք-չունեք, հավաքեք, ծովը նետեք. կարանտին է: Թարգմանիչին հարցուցի՝ նարի՞նջն ալ... «Նարինջն ալ, զեյթունն ալ, ամենը, ամենը... Կարանտին է»,– ըսավ:

– Է՜, Ազատուհի՜, հոգի՜ս, նարինջին համն ալ մոռցիր, զեյթունին գույնն ալ:

Մարգարի ձայնի մեջ գորովանք կար ու մեղքի զգացում:

– Մարգա՛ր, գիտես՝ ինչին կափսոսամ:

– Ինչի՞ն:

– Ծոկոլան... Ծոկոլան ալ ծովը նետեցի...

Մարգարը մեղմ ժպտաց ու կնոջը քնքուշ շոյելով՝ ասաց.

– Մի՛ ափսոսար...

Ազատուհին նորից հարցրեց.

– Մարգա՜ր...

– Ըսե...

– Մարգա՜ր, պրոպագանդիստին ըսած կարանտինը ե՞ րբ պիտ լըմըննա...

ՀՈՒԾ

...Կանգնել եմ Գյումրվա հին տներից մեկի մոտ: Տունը, փողոցը ծանոթ ու հարազատ են ինձ: 1988-նոյեմբերն էր. «Ուրախ Գյումրի» հաղորդումն էինք նկարահանում ու կադրերի մեծ մասը այստեղ, հենց այս փողոցում էինք անում: Ցուրտ, նոյեմբերյան օր էր, բայց խոսքաշեն ու հյուրամեծար Գյումրիում ո՞վ կմրսեր...

Ձիակառքին, կամ ինչպես գյումրեցիք են ասում՝ ֆայտոնին նվիրված կտորն էինք նկարահանում: Մի կենտ ֆայտոն էր մնացել Գյումրի-Լենինականում, ու հին բարի փողոցները առանց ֆայտոնի մարող զարկերակներ էին հիշեցնում, որն ավելի շատ հին գյումրեցիներն էին զգում: Այստեղ էր, հենց այս տան մոտ, որ նրանցից մեկն ասաց. «Ֆայտոնը Գյումրվա խիղճն է, թասիբը, Գյումրվա թալիսմանը, ֆայտոն որ չեղավ՝ Գյումրին կմեռնի»:

...Հաղորդումն արդեն պատրաստ էր, սպասում էինք եթեր հեռարձակման թույլտվություն ստանալուն: Ստեղծագործական խումբը գոհ էր աշխատանքից, գոհ էին նույնիսկ խստապահանջ, բազմավաստակ ռեժիսորն ու ԹՈՒՅԼԱՏՐՈՂԸ...

Հիշում եմ վերջին կադրերը. թախծոտ երաժշտության տակ հեռացող ֆայտոնն էր, մի տեսակ խռոված, արհամարհված, և զանգուլակների մարող ծլնգոցները, որ հալվում, ավելի շուտ խեղդվում էին 21-րդ դար շտապող աշխարհի թոհ ու բոհի մեջ...

1988-ի նոյեմբերին էր, մինչև ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 7-ը հաշված օրեր էին մնում...

ԻՍԱԿ ԴԱՅԻՆ

...Անցյալ դարի ութսունականներն էին: Գյուղեգյուղ, տնետուն ընկած՝ ստորագրություններ էինք հավաքում: Հիշում եմ՝ մեր գյուղ էինք գնում, սովորույթի համաձայն՝ կանգ առանք Իսակ դայու անտառում...

Հա, հա, անտառը իրոք նրանն էր. թող մեկը փորձեր կեռ ծառ կտրեր կամ անօրինական որս աներ: Աչքի լույսի պես էր պահում-պահպանում անտառը Իսակ դային: Կաղ էր Իսակը, դրա համար էլ կաղ Իսակ էին ասում: Նրա հյուրասիրությունը վայելելուց հետո, երբ պատրաստվում էինք շարունակել մեր ճանապարհը, վերջինս հարցրեց.

– Խեր ըլի, էդ ինչ դավթար ա կըռնըտակիդ:

– Ստորագրություններ ենք հավաքում, քեռի՛ Իսակ,– ասաց Գրիգորը:

– Խեր պանի մըհա՞ր,– հարցրեց Իսակը:

– Հա, Ղարաբաղի համար է,– ասացի ես ու հետո մի քիչ թերահավատ հարցրի.– կստորագրե՞ս...

Կաղ Իսակը ժպտաց ու.

– Թե ստորագրությունով դեք թուրքիցը Ղարաբաղը վեր ունիլ, հասիլ էկող գործ չի,– գնաց, կարպետի տակից հանեց երկփողանի հրացանն ու շարունակեց,– թուրքը սրա ահիցը էս ա հարիր տարուց էվել դեսը թեքվել չի... հետո,– երևի մեզ հուսախաբ չանելու կամ չնեղացնելու համար ասաց.– դավթարդ դեսը տու...

Քեռի Իսակն ստորագրեց ու խորհրդավոր շշուկով ավելացրեց.

– Էն, ինչ շհանց տվի, էն ա Ղարաբաղը ետ պիրիլի ճամփեն...

Հիմա, մեր գյուղի Ճամփին Իսակ դայու անտառը չկա, կտրատել, քաղաք են տարել, ծախել... Կաղ Իսակն էլ չկա...

Ծնորհիկ ՇԱՀԻՆՅԱՆ

ՄՈՍՈ ԿՆՈՆ

– Մամ, էս դիքը ես չեմ կարող ելնել,– բողոքեցի ես:

Թեև օրը մի քանի անգամ թեյամանով Մոսո աղբրից պաղ ջուր եմ բերում հորս, բայց այս անգամ ճանապարհն այլ է:

– Ըբը Կնոյին չըտեսնա՞նք, էս աշխարհ շատ հանաք-մասխարություն կեներ, տեսնինք էնտեղ իմա՞լ է:

Մամս իր խնդուքը թաքցրեց շալի պոչերի մեջ:

– Ո՞վ էր, Մոսո Կնոն, մա՛մ:

– Հանաքչի էր: Տարիմ ղոնաղռանցու իշուն գողցավ, բերեց գեղ, սև մրով ներկեց: Անձրև օր էշն առեջն էրուկ գնաց քաղաք փուրչուլուկ ծախելու: Մինչև Ղոնաղռան էշն անձրևի տակ լողցավ-իստկվավ: Ղոնաղռանա շոշի վրեն տերը ճանչցավ ուր իշուն: Կնոյի ձեռից էշն առան, մեշոկով փուռչուլուկ դրին Կնոյի շալակ, ետ ղրկին: Կնոն շատ մասխարա մարդ էր, օղորմի հոգուն:

Մոսո Կնոյի թոռներից մեկը՝ Արևը, շիվար է: Պինդ ոտուձեռը առվի պաղ ջրից կաս-կարմիր կտրած՝ լվացք է անում:

– Արև՛, էդ ի՞նչ ես լվանում:

– Ջհեզիս բրդերն ին, աղջիկնե՛ր ջան, հարսնքիս գիկաք, օր խաղ ըսիք:

Արևի հարսանիքը շա՛տ ուշացավ, արդեն հիսուն տարեկան է Արևը:

Խորթ մայրը մահացել է, բոլորը ողբում են՝ Արևը թե.

– Հերիք է անունն իտաք, խեղճ մեռելի էրեսներ մկա կվառվին:

Քույրը՝ Ծուշիկը, ամուսնացել է, շատ երեխաներ ունի, Արևը եկել է մեր տուն, մորս բողոքում է.

– Քեռեկի՛ն ջան, Ծուշոն մրեն էլավ, մրջուրն ընկավ, հալալ չէ՞ ընձի, ես ու իմ էշերը, իմալ ուզիմ, էդմալ կքշիմ:

Մամս հոգնել էր, ուզեց նստել, հանգստանալ, բայց չցանկացավ Մոսո Կնոյի դռանը նստել: Հաջորդ կանգառը Մոսո Մուկուչի տունն է:

Կտուրը փլփլված, առաջ թեքված, կախված է, ասես Կինտո Վանոյի գդակը լինի հարբած ժամանակ: Կինտո Վանոն, պատերազմից հետո տարին բոլոր քեֆը լավ, սրան-նրան քարշ է տալիս կոոպերատիվ.

– Հիտլերը ձեռս տարավ, էրկուսն իրան քիչ էր, ես դրա մերը...

Վանոյի աջ ձեռը, մինչև դաստակը, սև ձեռնոցի մեջ է, գրպանը չի դնում, ընդհակառակը՝ թափահարում է օդում, գլխից վերև:

Ո՞վ գիտի, Հիտլերը տեղյակ է Վանոյի ձեռքից, թե՞ չէ: Բայց Վանոն հարկ է համարում ամեն օր Հիտլերի մորը հիշեցնել իր ձեռքը:

Մանոն՝ Վանոյի կարմրերես, պինդ կնիկը, մոլորվելով Վանոյի ու Հիտլերի արանքում, մեկ չանչ է անում խմած, քնած Վանոյին, մեկ էլ՝ անհայտ հեռուներում թաքնված Հիտլերին, որ էս սև օրը բերեց Վանոյի գլխին:

Մի խոսքով, ոչ ավել, ոչ պակաս, Հիտլերը Վանոյին ու Մանոյին պարտք է կես ձեռք ու երկու հաշմված կյանք:

Պոլիտեխնիկի նախկին ուսանող Վանոն իր մաթեմատիկայի գիտելիքների ողջ պաշարն սպառել է կոոպերատիվում՝ օղու համար կոպեկ հաշվելով:

Մոսո Մուկուչը՝ հաստ, շեշխանա բեղերը մերթ-ընդմերթ շոյելով, ընդառաջ եկավ մամիս: Մորական կողմից ազգական է, և հաճախ երեկոները, երբ գառները հաջ-հաջ անելով գյուղամիջում բաժանում-վերջացնում է՝ տրեխները մեր դռանը թափ տալով, քթի տակ խնդմնդալով, մտնում է ներս:

– Մուկո՛ւչ քեռի, մեր չալ գառը չկա:

Մուկուչը, որ մորս հրավերից ոգևորված պատրաստվում է նստել արդեն գցված սեղանի մոտ, հանկարծակի է գալիս.

– Ջեբ դրուկ է, արի տար:

Այս ասելով՝ շուռ է գալիս դեպի տղեկը և շինելի գրպանը լայն բաց անում:

Մենք՝ երեխեքս, փռթկացնում ենք՝ թաքնվելով պահարանի հետևում կամ մորս թիկունքում, իսկ Մուկուչը, իր բարկությունը մեղմելով, շուռ է գալիս մեզ.

– Գա՛ռ ջան, մուշուրբեմ ջուր բիր:

«Գառներս» իրար ենք խառնվում, ոչ մեկը չի ուզում Մուկուչին ջուր բերել: «Մուշուրբեն» ձեռքից ձեռք է անցնում:

Բանն այն է, որ Մուկուչի խմելուց հետո մուշուրբեն ենթարկվելու է զանազան քսուքների ու ավազով շփումների, մինչև որ համոզվենք Մուկուչի կասկածելի մաքրության բեղերի հետքերի վերացման մեջ:

ՁԵԹՈՎ ԳԱԹԵՆ

Խանում քեռեկինս կլոր վառվռուն գաթա էր թխել, նախշուն լաչակի մեջ խաչկապ արել ու կալի պատին նստած՝ սպասում էր մամիս քաղաքից գալուն:

Օրը ճաշ էր դառել, մամը դեռ չկար, իսկ գաթեն արդեն սառել էր Խանում քեռեկնկաս գոգում:

Մենք կուտ տեսած ձնծղուկների պես չէինք հեռանում գաթի սահմաններից, ու Խանում քեռեկնկաս կլոր ու նախշուն գոգը գնալով ավելի ու ավելի անմատչելի էր դառնում:

Մամիս ձեռնափայտը սկզբում տնտղեց գետինը, ապա քայլ առ քայլ մոտեցավ մեզ: Մենք շաղ եկանք մամիս շուրջը: Վերջապես հերթը հասավ գաթին:

– Մա՛մ, Խանում քեռեկինը գաթա է բերել:

Քիշմիր շալի կապը քանդելով՝ մամս ականջը մոտեցրեց մեզ:

– Ի՞նչ է, լառ՛:

Գաթա՛, գաթա՛ է բերել,– իրար անցանք մենք:

Խանում քեռեկինս հեզորեն առաջ եկավ՝ երանելի գաթեն գրկին:

Կարմրիկ, փուխր գաթեն, արձակվելով լաչակի կապերից, անուշ բուրեց:

– Ձեթո՞վ է:

Մամիս հարցը միայն անտեղի ձգձգում էր գաթեն վայելելու հաճույքը:

– Հա, հա ձեթով է,– նորից իրար անցանք մենք:

Եվ հանկարծ կարմիր ու վառվռուն գաթեն կիսաշրջան գործելով՝ թռավ կալի մեջ ու կանգնեց մարդաբոյ խոտերի վրա:

– Չըմ ուտի, լառ՛, ես ձեթով գաթա չըմ ուտի:

Մենք տեղներիցս վեր թռանք, բայց մերս սաստեց մեզ.

– Աման, չվերցնեք, մամը կնեղանա:

Խանում քեռեկինս աղջկա՝ Օլգայի հարսանիքին մամիս չէր հրավիրել ու հիմա գաթեն որպես սրտառնուկ էր բերել:

Մինչ երեկո կարմիր գաթեն օրորվում էր խոտերի վրա:

Գիշերը կարմիր կաղնեփայտե թախտին պառկած մամս անվերջ շուռումուռ էր գալիս.

– Լառ՛, իդը ձեր թախտ շատ չոր է, չըմ կռնա քնի:

Մամիս մտքում ուրիշ, երանելի ու փափուկ թախտ կա:

Ես օր գեղից գացի, Սանդոն լավ թախտ մի ուներ: Պատերազմի վախտ ինչքան իմ քնի էդ թախտին:

Մեր ու Սանդոյենց տան տարածությունը հերըս անցավ-դարձավ անձեն-անծպտուն: Էդ գիշեր Սանդոն քնեց թոնրաշրթին: Սանդոյի թախտը մերից համ նեղ էր, համ՝ կարճ: Բայց մամս հավուր պատշաճի, մի քիչ սսկվեց, տնքաց-տնքտնքաց, ճրագը մորս մարել տվեց, բայց չէ, հնար չկար, Սանդոյի թախտը առաջ լավ էր, հմի էն չէ: Հա՛, Ծաշլին լավ թախտ մի ուներ, համ լեն էր, համ լե չէր ճռճռա: Այս անգամ մեր ու Ծաշլիենց տան ճանապարհը հերըս անցավ-դարձավ մորս ուղեկցությամբ, որ ճրագն էր բռնել: Զանգի շունն էլ, բանից անտեղյակ, ողջ թաղով մեկ հաչում-ազդարարում էր հորս գնալ-գալը:

Մինչ աքլորականչ դեռ շատ կա, ու մամս խոսք ու զրույց է բացում՝ էս անգամ էլ մշեցի Մաքոյի թախտի մասին:

Տեսնես էդ թախտը կա՞, էն ո՞ր թվին Մելիքը սարքեց, փետն էլ էս մեր առվի բոլորի ծառերից կտրեց, հա՛, սելավի տարին էր, արմատահան էղած ծառ էր: Այ թե թախտ էղավ, հա, Մելիքի ձեռներն օսկի էին, օղորմի հոգուն: Տեսնես էդ թախտը կա՞: Չէ, հորս համբերությունը չի հատնում, պարզապես մեր ու մշեցի Մաքոյի տան արանքը առուն է, կամուրջն էլ ջուրը քշել-տարել է:

Հերս վերջին թախտը իր բեռնատարով բերեց, հետն էլ Մաքոյին, որ բազմել էր թախտին՝ տեղաշորով-բանով:

Էդպես էլ ողջագուրվեցին մամիս հետ: Մթան մեջ շալը չէր գտել, էն իքն էր կապել: Վերջին թախտը դնելու տեղ չմնաց, մինչև լույս ետ տարվեցին-բաժանվեցին մնացած թախտերը:

Մինչև կեսօր մամս քնեց Մելիքի սարքած թախտին, իսկ մենք Մաքոյի հետ անարգել կերանք մամիս չհավանած ձեթով գաթեն:

Լավ էր՝ Մաքոն եկավ:

ԱԴԵՍ ՈՒ ՀԱՑԸ

Նեկտար ՍԻՄՈՆԻ

– Սիմոնիս պզդի՛գ աղջիկ, էդ հացն ուր կը-տանիս՝ ձեռիդ մեձը ձխլցնելով: Կարո՞ղ է գուզես թափես:

Ես նայեցի ձեռքիս պատառին:

– Փորդ կուշտ է, ըդուր հըմար էլ վրեն չես դողա: Դու չե՞ս տեսնի՝ ես էն գարու բոշկի վրա կըդնեմ, ձնջուղները գուկան կկտցեն: Ամ, լուսս քոռնա: Մէ պադմությունըմ ընգավ միտքս: Դե նստի կողքս, լսե ու անգըջիդ օղ էրա:

Ինձ մնում էր հնազանդվել:

– Բալա ջան, փախեփախի վախտ չիդեմ արդեն քանի օր էր՝ էդ խեղձուկրագ էշը իրա ձռձռան սելով մեզի կըտաներ, պաբը հա կըզարգեր մեջքին, օր առաջ էրտա. էմբես կեղներ, օր էդ կենդանին կկայներ իրա իշու խայսթով ու չէր էրտա: Մէ օրըմ էլ սելի ակը ջարդել էր, պաբը ըստեղ-ընդեղ ընգած՝ հնար գուզեր էներ: Էրեխեքս անոթի, ծարավ, նոր ծնված Սիմոնս էլ գրգիս մեձը: Արզունս գոգնոցիս փեշը կըքաշե, կըսե. «Մարե՛ ջան, էլ չեմ դիմանա, հըլը ջեբերիդ մեձը աշե, բալքիմ մէ նշխարքըմ հաց էղնի»: Իմ էրեխեն օր ըդման ըսավ, ինչըխ օր սրդիս տունը քանդվեր: Վիրև կաշեմ, կըսեմ՝ ո՞ւր ես, Երգնավո՛ր, մէ թիքեմ հացի հնա՛ր էրա, բալեքիս մէ կերբըմ փրգե՛: Մեգ էլ ուրդեղից ուրդեղ մէ բանըմ միտքս ընգավ: Սիմոնիս դրի խոդերի վրա, էրեխեքս ղուտիգիս վրա էին նստած, ըսի՝ հըլը ելեք: Ցուրտ, ոդ ու ձեռներս ինչըխ օր պաղ պուզ: Ղուտիգս բացի, քրքրի, գդա իմ ձեռով ասեղնագործած ձերմագ պզդիգ թաշկինագս. Սուրբ Առաքելոց եգեղեցուց օր նշխար կըբերեյ, մեձը կըդնեյ: Ինչքան նշխարք կար, դրի էրեխանցս լիզվըներին: Ըսի՝ չծամեք, թող ձեր բերնի մեձը փափկի ու ձեզի ուժ տա: Մէ մարխիմ չափ նշխարն էլ մարդու կկշտացնե: Գուրգենիս օր տվի, ասեղիմ չափ բարակ, չոր թիքեմ ընգավ ոդներին, էդի էլ իմ լիզվին դրի: Մեգ էլ պաբն էգավ, չիդեմ որ մէ ծանոթից ագ էր ձարե: Մեր սելը նորից ձռռաց:

Մի պահ թվաց՝ ադես իրական հեքիաթ է պատմում: Առանց ինձ նայելու՝ շարունակեց.– Տե-սա՝ պաբը զարմացած մեզի կաշե: Ես ու իմ էրե-խեքս կըժպտանք: Չի հասկընա, թե էդ ինչ հրաշք է էղե: Էս անոթիքը լալու տեղը կըժպտան: Էրեխեքս հավադացին, օր կշտացան: Էդ գիշերը հեչ մեգը չլացավ, հարի առավոդ Գիրքորն ալուր ձարեց:

Ես նայում էի հրաշագործ ադեիս և ուշադիր լսում նրան: Այո՛, հավատը մեծ ուժ ունի:

– Սիմոնիս պզդի՛գ աղջիկ, չմոռնաս ըսաձներս. ամեն հացի կդորը մէ նշխար է: Հացը ավելնորդ չի էղնի, հացը գեդին չքցես: Դու կըտեսնիս, օր ես հացը կըհավաքեմ, կըչորցնեմ արևի տագը, իմ հացիս սինին էլ կըշողշողա: Հեդո էդ հացը կըլցնեմ էն վենձ կաստուրգեն ու կըսպասեմ իմ Ֆիալկի հորթ ունենալուն: Հորթն օր կըծնվի, էդ օրերին ես իմ տան անասունին առդըվները հացով խաշիլ կուդամ: Չոր հացի վրա կըլցնեմ քիչըմ գոլ ջուր, քիչըմ գարու ալուր ու կըդնեմ դեմը: Կուդե ու ընձի կաշե, մեգ-մեգ էլ գլուխը կըտմբտմբցնե: Օր թազա ծննդկան իմ Ֆիալկին կկթեմ, կաթից հացի հոդ գուկա: Առաջի օրերի կաթը չի խմվի. շատ է յեղոտ: Էդ կաթից դալ կըսարքեմ: Ըդուրից էլ հացահոտ գուկա: Օր Ֆիալկիս հորթին գուզեմ կաթից կդրեմ, իրան էլ հացի խաշիլով կըպայեմ: Հացը, բալա՛ ջան, մոր կաթի պես անարադ է: Էդ ինչը՞խ անաստված ձեռ բդի եղնի, օր հացը գեդին քցե:

Ադես երևի չգիտեր, թե ինչպես էին իր խոսքերն ականջիս օղ դառնում:

– Ինչքան էլ կուշտ էղնիմ,– մի պահ կանգ առավ ու շարունակեց,– աչքս հացի մեձն է, իրան կարոտ կըմնամ: Տիպ բարձիս տագը Մարիամ Աստ-վաձաձնի նկարն է ու մէ կտորըմ բոքոն՝ լավաշի մեձը փաթթած: Օր կըմդնիմ տեղաշորիս մեձը, երկուսին էլ կըպաչեմ, կըդնեմ դոշիս, աղոթքս կենեմ ու կըքնիմ: Առավոդը գելնիմ թե չէ, մինագ իրանք գիդեն՝ ինչ է գրած ձակտիս:

Ես լուռ էի:

– Բալա՛ ջան, ամեն իրգուն, կիրագնամթին կըբացեմ հացիս ղուտիգը, կաշեմ դարսած հա-ցերին ու փառք կուդամ Աստձուն: Ընձի կըսեմ՝ Եղսո՛ր, ղուտիգիդ մեձը բդի հաց էղնի, օր սովաձին թիքեմ հաց բաժին հանես ու մդաձես, օր քու տան դռնով մարդն անոթի չբդի անցնի: Օսկով չես կշտանա, բալե՛ս. ըդիգ պսպղան խաղալիք է, օր

մարդիկ չեն հասկընա: Հացն ու օսկին օր իրար կողք կըդնեն, անոթին կերտա դեբի հացը, կուշտը օսկին կըլցնե ջեբերը: Սիմոնիս պզդի՛գ աղջիկ, կըհիշե՞ս՝ մէ օրըմ, օր հացի թիքեն ընգավ ձեռիցս, ըսեցիր՝ Ադե՛, գեղնին ընգած հացը չուդես. հողոտ է: Ես էլ նեղեցա վրեդ, թե էդ ի՞նչ կըխոսաս քեզնեն դուս, ինչըխ թե հողոդ է, ընչի՞ հողը կեղդոդ է: Ես իմ լավաշի կդորը թափ տվի ու անուշ-անուշ կերա: Բալա՛ ջան, մեր Արազգեղն օր մերս հաց կըթխեր, կըսեր. «Եղսո՛, առաջի հացը տար մեր հարևան հիվանդ Սաթոյին. առաջի հացը բդի հիվանդն ուդե, օր կըրնանա տեղից ելնի»:

Ադես ինձ էլ չէր նայում. կարծես մենախոսում էր:

– Աշունն օր կաշեմ Սիմոնիս՝ գլուխը կախ, գերանդով կըքաղե մեր ցորնի արդը, ինչըխ օր վրես խնդություն իջնի: Եգուց-մեգել օր էդ սրսուռ ցորենը ալուր կըդառնա, հեդո էլ կեղնի իմ տան սեղնի հացը: Ամեն գարուն Սիմոնիս կըսեմ՝ բալա՛ ջան, մէ թիզըմ հողը բիլամ առանց ցանել չթողնաս, էդ հողը տիրոջ տվածն է. օր սիրես, ինքը քեզի հաց կուդա: Մեր Արազգեղի արդի ցորենն օր կըհասներ, պաբը էդ ցորնի հասկերից խաչ կըսարքեր ու կկախեր պադից հարի մեգել աշունքը: Հըմի էլ ես ըդման կենեմ ու կկախեմ հացատան պադից: Սիմոնիս պզդի՛գ աղջիկ, ուր էլ էրտաս, չմոռնաս մեր հացատունը: Ըստեղ մեր իրար վրա դարսած լավաշն է, էլ հեչ մէ տեղըմ ըսման բան չես տեսնի: Ես գուզեմ, օր դու հասկընաս, թե ընչի՞ թնդիրը հողի մեձը կըթաղեն. ըդման կենեն, որդև թնդըրի կավը ուժ կառնի հողից, օր լավաշդ անարադ եղնի: Հարի հաց թխել սորվա, քանի՞ ձամպա անցա: Օր պզդիգ էի, մինագ գունդ կկրեյ, հեդո մերս ըսավ. «Եղսո՛, արդեն կըրնաս գրդնակ էնես»: Ինչքան լավ կըգրդնգեյ, ծերերը հաստ կըմնար. օր հարս դառա, արդեն ծերերն էլ բարգցրի. կիսուրս թողեց, օր հացը թխեմ: Երեխեքս օր կըծնվեին, կիսուրս մէ սաղլամ լավաշըմ կըդներ բարուրի վրա ու աղոթք կեներ: Ինչ ըսեմ, բալա՛ ջան. եփ օր մեռա Աստծու կամքով, մէ թիքեմ հաց էլ կըդնեք ծոցս: Առանց հաց ձամպա ելնել չի էղնի. ով գիդե՝ բալքի մէ անոթիմ ելավ դեմս. թող բուռս լիքը եղնի:

Նայում էի ադեիս և չէի հավատում, որ գալու է մի օր, երբ նրա խաչված մոմե ձեռքերի մեջ թաշկինակի տեղ պիտի ծաղիկ լավաշ լիներ:

Արիս ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ԽԱՂԱՄՈՒԸ

Կեսօր էր: Արևը, վաղուց ձեղքելով ամպերի ամրությունը, երկիր էր իջել և քնքշորեն գուրգուրում էր լեռների գագաթները: Արևի կրքից արբեցած քաղաքը լողում էր բաց երկնքի տակ: Մարդկային աղմուկը հասցրել էր խաթարել քաղաքի անդորրը: Մեքենաների եռուզեռից այրվող ասֆալտից բարձրացող գոլորշին հասնում էր փողոցի եզրի շենքերի պատուհաններին: Աշխատանքային ժամը հատել էր պիկի շեմը: Խցանումները սկսել էին խոչընդոտել մարդկանց ազատ տեղաշարժը: Ես աչքերս բացեցի այն պահին, երբ արևը, սողոսկելով մաշված վարագույրի անցքերից ներս, խաղում էր դեմքիս: Զարմացած շուրջս էի նայում: Անկողնուս՝ առավել ևս սավանիս գույնը վաղուց մոռացել էի: Տան պատերը սառն ու օտար էին: Առաստաղից կախված մի հին ջահ էր օրորվում, որը քիչ թե շատ ծանոթ երանգներ էր թարմացնում մթագնած հիշողությանս մեջ: Փորձում էի հասկանալ՝ երբ և ինչպես եմ հայտնվել անկողնում, բայց... Մարմինս ձգելով՝ կիսապառկած դիրք ընդունեցի, սկսեցի շուրջս զննել: Սենյակի դուռը բաց էր: Շեմքին կանգնած երկարամազ, թախծոտ աչքերով մի կին լուռ ինձ էր նայում: Նրա հայացքն այնքան արտահայտիչ էր, թվում էր՝ ողջ գիշեր անշարժ ինձ էր հետևել: Սաստիկ գլխացավ ունեի, որը, անխոս, խմիչքի չարաշահման արդյունքն էր: Լռություն էր, սենյակի պատերն ասես հալածում էին ինձ: Մեղավորության զգացումը, որը վատթարագույններից է կյանքում, սկսեց ճնշել ինձ: Մարմնովս դող անցավ: Քանի անգամ էի խոստում տվել ու դրժել, երդվել, հայհոյել և ի՞նչ... Ես նույն կարգավիճակում էի: Երկու պարզ աչքեր իմ պատճառով շարունակ վանում

էին ժպիտն ու տեղ տալիս արցունքներին: Ես մնում էի նույն խենթը, որի հետևից տառապանքի մի մեծ հետք էր մնում: Այն մեծ անջրպետը, որ գոյացել էր մեր մեջ, վաղ թե ուշ պայթելու էր, այն ական էր, որի ռիսկերը ես հաշվի չէի առնում: Հոգեսպան լռությունը պատուհանի փեղկերի պես զարնվում էր կարծրացած սրտիս, փորձում վերակենդանացնել մահացող զգացմունքներս...

Մարին, ինչպես աշնան դեղնած մի հասկ, որը գլուխը կախ շարունակ պայքարում է անձրևի ու քամու դեմ, դեռ դիմանում էր ինձ: Կնոջը բնորոշ հեզությամբ, նայելով աչքերս մեջ, սկսեց ցրել լռությունը.

– Բարև՛, Ավո՛, մինչ դու կեսգիշերային քո արկածներից գինովցած մահճակալդ էիր փնտրում, որը ժամանակին մեծ սիրով միասին էինք կիսում, ես իմ ապրումներից հոգնած հորդորում էի ինձ զուսպ մնալ, չխոսել: Նայելով քեզ՝ ես բախվում եմ լռության մի մեծ պատի: Ամեն ինչ կարծես քո հայացքի մեջ գրված է:

– Իրավացի ես, Մարի՛, ես գիտակցում եմ իմ սխալը, կյանքում միշտ մենք ունենք ընտրության հնարավորություն, ուղղակի պիտի կարողանանք ճիշտ պահին կանգ առնել: Ես խոստանում եմ վերջին անգամ:

– Վերջին անգա՞մ, ի՞նչ հետաքրքիր է հնչում, Ավո՛: Գարնան անձրևների հետ մեր սերն էլ է վարարել, խառնվել անցած տարիների տիղմին ու նույն առվով հոսել: Ամեն անգամ, երբ այս տան պատերի ներսում հեռախոսի կամ դռան զանգ է հնչում, ես դիվահարի պես իմ հյուծված մարմինը փորձում եմ մի անկյունում քողարկել: Դու ասես ուրվական լինես՝ հայտնվում ես լուսադեմին, անգիտակից և հեռանում անգիտակից, իսկ հիմա ասում ես՝ վերջին անգամ: Ես երբեք չէի ուզենա, որ իմ կյանքում ինչ-որ հատված կամ սիրուց ծնված, անէացած ինչ-որ բան լիներ վերջից կախված:

– Մարի՛, արի այստեղ կանգ առնենք, մեկ բաժակ սուրճ դիր, սեղանի շուրջ կխոսենք, թերևս դա լավագույն ելքն է:

Ու մինչ սառը ջրի տակ փորձում էի ծանրացած գլուխս թեթևացնել, Մարին սուրճի սեղանն արդեն հացի էր վերածել: Անխոս մոռացել էի՝ վերջին անգամ երբ էի տանը ճաշել: Նույնիսկ սեղանն էր զարմացած՝ մեզ համատեղ իր շուրջը տեսնելուց: Մարիի պատրաստած ճաշի հոտն անգամ կշտացնող էր: Ես լուռ հետևում էի նրա ձեռքի շարժումներին: Ամեն գնով նա փորձում էր, որ իր պատրաստած բոլոր ճաշատեսակներից համտեսեմ: Իսկ ես, ներքին վախերը սրտումս, սպասում էի, որ հեռախոսը չզանգի, գոնե այսօր տանը մնամ: Օրը մաշվում էր ժամանակի մեջ, երեկոն աստիճանաբար իրեն տեղ էր ազատում, մենք խոսում էինք, քննարկում, երբ անսպասելի լսվեց դռան զանգը: Նույն պահին մեր հայացքները կանգ առան դեմ դիմաց: Ես նկատեցի՝ ինչպես Մարին մի ակնթարթում սփրթնեց: Ես գիտակցում էի՝ ինչ է լինելու մի քանի վայրկյան հետո: Դուռը բացեցի. Աբոն էր: Ներս հրավիրեցի, նա մերժեց: Ես հասկացա, որ լեռնալանջից պոկված ձնահյուսքի պես այս հրավիճակը րոպեների ընթացքում լափելու էր իմ ընտանիքը: Իմ բոլոր խոստումները գլորվում էին ձյան հետ և մնալու էին նրա շերտի տակ: Նա մի քանի բառ շշնջաց ականջիս և դուրս եկավ: Դուռը առանց փակելու հայացքս շրջեցի դեպի սեղանի շուրջը նստած Մարիին: Արցունքներն անձայն, իրենց ճանապարհ հարթելով, թրջում էին դատարկ ափսեն: Համարձակություն չունենալով մոտենալ, գրկել նրան, ընդամենը արտաբերեցի, որ մեկ ժամից տանը կլինեմ, մեկ ժամից՝ կարծես ինքս էլ ասածիս չհավատալով: Մինչ տղաները մեքենան քշում էին մեզ այնքան հարազատ խաղատան ուղղությամբ, ես անբնական լռությամբ էի պարուրվել: Առաջին անգամ Մարիի արցունքոտ աչքերը սկսեցին ճնշել ինձ: Սիրտս սկսեց արագ աշխատել: Տղաները ջանասիրաբար միմյանց էին փոխանցում լցոնված ծխախոտը, մեքենայի մեջ տարածվում էր թարմ կանեփի հոտը, և մեծ հաշվով մեկ էր՝ ես ուրախ էի, թե մտահոգ: Մենք արդեն խաղատանն էինք, երբ անբնական զգացողություններ սկսեցին ինձ տիրել:

Այդ երեկո ծովը վարար էր, ալիքները մեծ էին, գիշերը՝ անհամաչափ: Մարիի աչքերը ամեն ինչ կարծես կանխորոշում էին, իսկ մենք առագաստները փոխելու փոխարեն նետվում էինք բաց ծով: Ես կարծես անջատված լինեի, Մարին վերջնականորեն փոթորկեց ներաշխարհս: Տղաների ձայները գնալով բարձրանում էին: Ուշադրությունս շեղվեց նրանց ձայնից.

– Վաղը նշված ժամին, Աբո՛:

Լռություն էր: Գումարի չափը լսելուց պապանձվել էի: Որտեղից էինք տալու: Պարտքը ինչքան Աբոյինն էր, նույնքան էլ՝ իմն ու Արտակինը: Իսկ ես Մարիին խոստացել էի մեկ ժամից վերադառնալ, իսկ լաբիրինթոսում այդպես էլ լույս չէր երևում: Աբոն, դատարկելով բաժակի պարունակությունը, ձեռքը խփեց սեղանին.

– Ասացի՛ կտամ:

– Վա՛ղը, Աբո՛:

Աղմուկն աստիճանաբար նոր թափ հավաքեց, հրմշտոց սկսվեց: Թվում էր՝ վեճն ավելի մեծ ալիք է հավաքելու, սակայն րոպեներ անց քար լռություն տիրեց: Սենյակում միայն գետին ընկնող փամփուշտի ձայնն էր լսվում: Սեղանից քիչ հեռու գոյացած արյան շիթը տարածվում էր հատակով մեկ: Մարմինս սառել էր, լեզուս՝ պապանձվել, բոլորը քարացել էին, միայն րոպեներ անց կարողացա գոռալ՝ Աբո՛...

Արմենուհի ՄԽԻԹԱՐՅԱՆ

ԼԵՆԻՆԱԿԱՆՅԱՆ ԷՏՅՈՒԴ

– Հեյ գիդի, հա՛, քսանհինգ տարի էս կողմերում աշխատել եմ,– ղեկը թեքեց Զոյգ աղբյուրների փողոցի կողմը՝ հետն էլ կողքին նստած տղամարդու հետ կարոտախտով կիսվեց վարորդը:

12 համարի երթուղային տաքսին է՝ «մարշուտկեն»: Վարորդի կարոտախտը անմիջապես փոխանցվեց տարիք ունեցող ուղևորներին, իսկ կողքին նստած սպիտակահեր տղամարդը ափսոսանքի ախ քաշեց.

– Է, ինչ ժամանակներ էին: Տո ուստա՛, կհիշե՞ս, ինչ ըսես կար՝ թափած էր:

Մի կին, որ պատրաստվում էր իջնելու՝ արձագանքեց.

– Իյա՛, հըմի չկա՞, հըմի ավելի շատ բան կա: Խանութները կտրաքին էղածից, առնո՛ղ չկա, փո՛ղ չկա:

– Էս ի՞նչ կըսես,– վրդովվեց ուստա վարորդը,– հըբը հա՛մը, հո՛տը, որա՛գը: Հեչ կհամեմատե՞ս: Քանի՞ տարի «Красный мак» խանութում կաշխատեի, зернистый икрен թափած՝ վո՞վ կմտածեր բնականի ու անբնականի մասին՝ ինքն էր ու վերջ: Ամեն եռամսյակը մեկ տոննաներով շոկոլադ կստանայի Մոսկվայից, անուշ հոտեն չէիր կշտանա՝ «Ծուռ թաթը», «Կրասնի մակը», հըբը «Բելոչկեն»:

Կողքի սպիտակահերը ոգևորված շարունակեց.

– Ուստա՛, հըբը բոչկով սիլոդկեն: Ըդոնց յուղալի տեսքից սիրտդ մենակ խաշած կարտոլ գուզեր, օխա՛յ...

Ակնթարթային վախ ապրեցի: Մի պահ թվաց 90-ականները ետ են եկել, երբ սննդի պակասը լրացվում էր նրանց տեսքի ու պատրաստման եղանակների մասին համով-հոտով զրույցներով: Իմիջիայլոց, այդ տարիներից մեզ ժառանգություն մնացին հեռուստաթերթերով տրվող խոհարարական ժամերը...

Վարորդի ձայնն ու ոգևորվածությունը տրամադրում են լսելու: Շարունակում է սպիտակահեր տղամարդու խոսքը.

– Տո՛, լա՛վ ըսիր, հըբը շախով միսը... Հա՛, մե բանըմ հիշեցի, բդի պատմեմ,– և ոչ մեկի համաձայնությունը չհարցնելով՝ ոգևորված սկսեց.

– Ուրեմն, մե օրմ, ախպերս օր դուն ես, էգել եմ գործի: Խաղա՛ղ, լավ օր է, ամառվա անուշ օր: Հո միս չենք ստացել, ի՞նչ միս՝ ախպերն ախպորը չի տա: Ուրեմն առավոտ կանուխ էս միսը ջարդրդել եմ՝ քաշել, չյանգյալն էլ կողքից կախել, օր մեկըմ մատով կպնի: Կհիշե՞ք, գոսպիտալը մեր խանութին մոդիկ էր: Ըդտեղ մե սիրուն, շարմաղ բժշկուհիմ կաշխատիր. Լենինգրադից էր էկել: Անաստվածը օր խանութ կմտնիր, ինչխօր լուս բերեր հետը: Ըշտը ինչ երգրցնեմ, էս բժշկուհիս խանութ էգավ: Ընձի ըսին, օր լավ միս գուզե: Էգա, կըսեմ՝ сколько надо, красавица: Ինքն էլ թե՝ էրկու կիլո: Մառլին մե կողմ կքաշեմ, ըսպես մե տեսագըմ հբա՛րդ, յանի գուզեմ ըսեմ, թե տես, ի՞նչ միս է, մեգ էլ մե ճանճըմ մառլու տըգից տզզալեն դուս թռավ: Վա՛յ, ես քու... խայդառակ էղանք...

Հըմի էս սիրունս ճանճը տեսել է, խելոք կանգնել է, միսը չի առնի, բայց ժողովրդի մոտ էլ չի ուզե խայդառակ էնե: Մե կողմ է տարել ընձի, կամաց անգջիցս ռուսերեն կփսփսա.

– Էս միսը չեմ առնի... муха...

– Վա՛յ, ես քու ֆայմով ցավդ տանիմ, բժշկուհի՛ ջան:

Տղոնցը ըսի, նեսից թազա կդորմ ջարդեցին, բերեցին:

– Տո՛, մարդ հարգել կար, իրար հասկնալ կար, համ ու հոտ կար ամեն ընչի մեջ,– ինքն իր պատմածից եզրակացություն արեց վարորդը:

Այսպես դեռ երկար կշարունակվեր զրույցը: Մի պահ ինձ թվաց՝ տանն եմ, կողքիս մերոնք են՝ հին ու նոր խառնած զրուցում ենք: Ափսոս, անիվները պտտվում են, ամեն մեկս մեր կանգառին ենք հասնում՝ իջնում, ամեն մեկս իր բաժին կարոտախտով, իր բաժին լավ ու վատով: Հազա՛ր ափսոս, ինչ անմոռաց պատմություններ կարող էի լսել, որ չլսեցի:

Հ.Գ. – Երկու օրից նույն երթուղայինում նորից հանդիպեցի վարորդին: Խոսելու տրամադրություն չուներ, ողևորներ, բացի ինձանից, չուներ:

– Վարպե՞տ, երկու օր առաջ հետաքրքիր բաներ էիր հիշում, Լեննագանից կպատմեիր: Հիմա ձեր պատմածը պատմվածք եմ դարձրել, ձեր անունը կասե՞ք, խնդրում եմ:

– Խնդրելու բան չկա, աղջի՛կ ջան, ուստա Հենդոն եմ:

ՃԱՆԱՉԵԼ ՄԵՂԱՎՈՐ

Օրն այնքան պայծառ ու լավն էր, որքան կարող է լինել հունիսյան օրը, երբ բեղմնավորված բնությունը մայրության դանդաղ, հաճելի սպասման մեջ է:

Առավոտյան թարմ ու տաք օդի մեջ վտանգի դույզն իսկ նշույլ չկար: Հետո՞ ինչ, որ 92-ի հունիսն էր: Բնությունն անտեղյակ էր թվերի դասավորությանը: Բնությունն անտարբեր էր պատերազմի նկատմամբ: Ես կասեի՝ հիացած չէր նրանով. ինքն ավելին էր կարողացել 88-ի ձմռանը:

Հունիսյան օր էր, արև էր: Սկսվել էր օրը և պիտի որ բնականոն ընթացք ունենար: Այն ապահովելու համար տանտիկինը խմոր շաղախեց. ալյուր, աղ, ջուր: Խմորն այնպիսի ջանադրությամբ էր ճմռում, ճզմում, կարծես կյանքի նպատակ լիներ կամ էլ օրվա բնականոն ընթացքն ապահովող գլխավորագույն բաղադրիչ: Սակայն այդպես թվում էր, այն էլ կողքից և միայն առաջին հայացքից: Խմոր շաղախելը պարզապես ձգձգվում էր, վերածվում հաճելի խաղի: Խմորի հետ մատների շփումից դուրեկան, հանգստացնող, փոքրիկ իմպուլսներ էին հաղորդվում գլխին: Կյանք առած խմորը մատների միջոցով ուղեղին էր հասցնում ապահովության, խաղաղության ցանկալի զգացողություններ: Խմորը թույլ էր տալիս հեռու վանել չար մտքերը:

Օրն ինքը թույլ չէր տալիս մտածել չարի մասին: Չնայած պատերազմ էր, բայց իր համար մինչ օրս անվտանգ էր: Իր կողքին ու իրենից հեռու էր պատերազմը, մի տեսակ շոյելով էր ցավեցնում, և կինը, անկախ ամեն ինչից, դրան համաձայն էր. «Թող այդպես լինի, միայն թե այն երկու անգամների նման այս մի անգամն էլ հետ գա. ոջլոտած, հոգնած, ընկճված, նյարդերի կծիկ, բայց միայն թե գա՛...»:

Կինն անձնավորել էր պատերազմ կոչվածին: Նրա հետ մտովի զրուցում էր, սիրաշահում, համոզում, որ իրենցից հեռու մնա... Կարծես ստացվում էր՝ լեզու գտնում էին արդեն երկու տարի: Կեսգիշերվա լուսային մեկժամյա ընդմիջմանը հասցրել էր հեռուստացույցով ֆիքսել. «Ընդամենը երկու զոհ, որոնց ինքնությունը ճշտվում է...»: Դե, փառքդ շատ, Տե՛ր... Կարծես թմրած ուղեղն ուզում էր անդրադառնալ երկուսի՝ երկու զոհի լինելությանը. չկարողացավ, չստացվեց...

Սպիտակ, մաքուր կտորի մեջ փաթաթված խմորն սպասում էր: Վաղուց էր հանգստացել, ժամանակն էր, որ հարթ, փափուկ մարմնի վրա դարձյալ զգար կնոջ ձկուն մատների դաշնամուրը:

Կինը նստել էր պատուհանի դիմաց՝ սեղանի մոտ: Դուրս էր նայում: Օրվա այդ ժամին պատուհանի մոտ նստելն ու մանավանդ նայելը անիմաստ բաներ էին, որովհետև արևն այդ ժամին այնպես էր ողողում ապակիները, կարծես ողջ այրող ուժը հենց այդ ժամի համար պահած լիներ: Եվ առնվազն տարօրինակ էր կնոջ վարքը: Նա չէր սիրում արևալեցուն այդժամյա պատուհանը, նրա կուրացնող փայլը:

Մտքերը թափառիկ էին. մեկ հայտնվում էին պատերազմի դաշտում, մեկ էլ սարսափած հետ թռչում ու չափչփում քարուքանդ քաղաքի փողոցներում: Այստեղ էլ մխիթարող ոչինչ չկար. մութ ակնախոռոչներով շենքերի կմախքներ, գորշություն, աչք ծակող գաճաճություն: Քաղաքն իր սլացիկությունը զոհաբերել էր անցած սաստիկ ձմեռներին, և գրեթե ամեն օր՝ դանդաղընթաց զրահամեքենա՝ հերթական թանկագին զոհը վրան... Վատ մտքերն արագ ջրամույն արեց. հավատում էր նրանց իրականանալու սովորության ուժին:

Արևի բոցերի մեջ, երևի ճառագայթներից մեկով նետված մի ճնճղուկ, կարծես թռիչքի մեջ մեխվեց պատուհանին և իր փոքրիկ արծվաքթիկով երեք անգամ՝ կը՛տ, կը՛տ, կը՛տ, հարվածեց ապակուն ու թռա՛վ...

Կնոջ շունչը կտրվեց, սիրտը մի պահ դադարեց: Ո՛չ, ո՛չ, լավ էր հասկանում՝ լուր է սպասվում, բայց ինչպիսի՞... Չգիտենալը սպանում էր, անորոշությունը սպանում էր, անլուր մնալը սպանում էր: Սպանություն... մահ... զոհ... սպանություն... մահ... զոհ... Արդեն քանի տարի է՝ միայն զոհվում են, չեն ապրում: Կինը նստած քարացել էր, այդպես էլ չկարողացավ հասնել խմորին, խմորը սնունդ չդարձավ, մնաց սեղանին՝ սպասելով: Ճնճղուկը, սիրտն ու հոգին առել, թռել էր...

Առավոտյան դրոշով ծածկված զրահամեքենան գտավ իրենց տան ճամփան:

Հ.Գ. Կնոջ այն ժամանակվա երեսունին քսանյոթն էլ է գումարվել: Նրա անկողպեք դարպասից ազատ ելումուտ են անում փողոցի շներն ու կատուները: Կերակրաամանն ու ջրամանը միշտ լիքն են, չնայած տանտիկինը ո՛չ շուն է պահում, ո՛չ էլ կատու: Կերակրաամանից օգտվում են նաև պարտեզում երգող սոխակները, չարաճճի ճտճտացող կաչաղակները, անհաշտ կռռացող ագռավները և... ճնճղուկները, այո՛, ճնճղուկները: Նրանց միայն մի բան է արգելված... Քանզի չկա նման հանցանքի վաղեմության ժամկետ:

Հրանուշ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

ԲԱԽՏԱԽԱՂ

Ամենամեծ ու խորամանկ աճպարարը Բախտն է: Նա երանության խաղաքարեր է շարում ճամփիս: Չեմ վերցնում՝ հետապնդում են կրնկակոխ, փորձում եմ հպվել՝ անէանում են, հալվում: Բախտախաղն անվերջ տանուլ եմ տալիս: Հերթական պարտությունն է. մի քանի օր գիշերները կանձրևեմ թաքուն, որոշ ժամանակ գիշերներն ամպամած կմնամ: Հետո ցերեկներն արևաժպիտ կհագնեմ: Պարտվել՝ պարտվել եմ, հո չեմ որոտալու, չեմ մեռնելու, հո չեմ խփելու ինձ պատեպատ: Ջուրն ու կրակն առած, ի դեպ՝ հենց սա է իմը, կտեղավորվեմ կինսափորում, կալիքվեմ ու կեռամ, կալիքվեմ ու կեռամ: Եվ որ Բախտն ինձ չծաղրի բնավ, խիստ կլինեմ ինձ հետ ավելի. հոգիս գոց կանեմ, սրտիս լեզուն կդաղեմ մի լավ: Հետո ձերմակ հագած՝ Հարսնածառ կդառնամ ճամփից դուրս, որ ինձ չդիպչի ոչ մի խաղ, որ օրերս եղանակավորվեն երկնքից, որ երկնային հմայքը վայելեմ խենթացնող, հանդարտվե՛մ... Տե՛ս, քեզ ինչպես եմ անտեսում, Բախտախա՛ղ:

ԱՆՀՈԳՈՒԹՅԱՆ ՀՐՎԱՆԴԱՆ

Որպեսզի հասնեմ իմ Անհոգության հրվանդանին, պետք է անցնեմ մեկ դար այն կողմ, յոթ սար, յոթ ձոր այն կողմ, պետք է անցնեմ Ցավի, Տառապանքի, Կորուստների, Կարոտի, Սիրո, Զմայլանքի և Մոռացման հրվանդաններով...

Եկա՛, դժվար էր, բայց եկա, որ էլի տեսնեմ ինձ: Մեր հին տունը. կիսկսված քարերով, հողի ու դարմանի շաղախով, հողե հատակով, հողե տանիքով, երդիկով... Եկա ու երկմտում եմ՝ ինչո՞ւ Անհոգության...

Մայրս ձյունի տակ մնացած կարտոֆիլն է փրկում մեր փոքրիկ հողակտորից ու դույլերով դատարկում է վառարանի մոտ՝ չորանալու, կամ էլ անկողինն է անվերջ փախցնում կաթիլքի տակից: Հայրս՝ թշնամու գնդակներից վիրավոր, ցավող ոտքին ուժ է տալիս թևատակի զույգ հենակներով: Քույրս մեզ համար ամեն օր Աղայան, Ռաֆֆի, Նար-Դոս ու Թումանյան է կարդում, մենք հմայված լսում ենք:

Գնացքներն անվերջ՝ ցերեկ ու գիշեր, մեր անհոգության օրերն են տանում:

Ես հաճախ եմ լսում ցածր, վախով արտասանված Սիբիր, Մագադան, աքսոր բառերն ու զարմանում եմ, թե ինչո՞ւ ամեն երեկո մեր տանը հավաքված հարևան կանայք իմ տատի հետ մանի են կանչում, երգում ու հետն էլ անձայն լալիս են: Ես չեմ երգում, այլ կիսում եմ նրանց լացը: Իսկ տատս՝ առավոտ կանուխ, գոգնոցի ծայրը տանում է թաց աչքերին ու ամենօրյա աղոթքն է անում.

– Բարի լույսի Աստվա՛ծ, թուրքի թևերը թափի՛:

Ավիկ ԴԵՐԵՆՑ

ՀՈՒՅՍԻ ՍԱՀՄԱՆՆԵՐ

Երբ արևը
Արթնանում է
Խոր քնից
Եվ իր լույսով
Սեր ու խինդ է
Խոստանում,
Բառը շուրթիս
Հրձվում է,
Դառնում երգ,
Ու քայլերս
Ինձ վերցնում են
Դուրս տանում:

Հեռանում են
Կասկածները
Իմ հոգուց,
Հեռանում են
Իմ ցավերն էլ
Նրանց հետ,
Ցոլքն արևի
Կաթկթում է
Ինձ վրա,
Սիրտս սիրո
Կաթոցներն է
Գրանցել:

Իսկ արևը
Դեռ ժպտում է
Վերևից,
Նա էլ ինձ պես
Քեզ է հիշել
Երևի:

ՀԱՂԹՈՒԹՅՈՒՆ

Այս կարճ կյանքը
Դու ապրում ես
Քո փշրված
Հայելով
Ու հավատքդ
Մասնատում ես՝
Այդ հայելուն
Նայելով...

Ե՛կ միասին
Գնանք այնտեղ,
Ուր ամառ կա,
Վարդ ու գույն,
Թող ունենանք
Մե՛կ հաղթանակ,
Թեկուզ հազար
Պարտություն:

ԵՐԱԶՆԵՐԻՍ ԵՐԱԶՆԵՐԸ

Հեռանում եմ քեզանից,
Որ սովորեմ կարոտել,
Հիմա թախծոտ երգերի
Ճամփաները քարոտ են:

Չկան երգեր՝ խենթ ու մեղմ,
Չկան երգեր՝ նոր ու հին,
Ո՛չ ընկեր կա, ո՛չ եղբայր,
Դատարկվել է շուրջը իմ:

Միայն հույզեր կան անուշ
Ու զգվանքներ անմոռաց,
Որ դարձել են երազներ
Ու երկնքից իջել ցած:

ԿԱՐՈՏԵՐԳ

Մերկ, վարսաթափ
Մի այգի,
Ուռենիներ
Գլխիկոր,
Ու մի թաց հուշ
Անհոգի,
Ու մի կարոտ
Հեռավոր:

Մի նստարան
Կա դատարկ,
Ու հրաժեշտ՝
Պաղ օդում,
Ու մի կորած
Ժամանակ
Նայում է ու
Աղոթում:

ԱՂՈԹՔՆԵՐԴ

Լույսիդ շողը
Աչքերիս հետ է խաղում
Ու մաքրում է
Իմ մտքերի ապակին,
Քո մշուշոտ
Ձայնը իմ մեջ է խաչվում,
Գալիս է մեղմ,
Հպվում հոգուս փափագին...

Հետո ձայնդ...
Մեղմիկ բեկվում է իմ մեջ,
Քնքուշ է, բայց
Նվաճում է անողոք,
Ձայնդ տաք է,
Ինչպես լույսի ելևէջ,
Ծարական է,
Սիրո խոսք է ու աղոթք:

ՀՈԳՈՒՍ ՆԺՈՒՅԳԸ

Հոգուս նժույգը
Քեզ որոնելով
Ելնում է երկինք,
Ճեղքում ամպերը:
Երբեք չի հոգնում
Դեգերումներից,
Ինքն է իր մտքի,
Իր գլխի տերը:

Ու վրնջում է
Նա հողմահալած,
Պատուհաններն է
Երկնքի թակում,
Դռնեդուռ ընկած
Բախտիս նժույգը
Կուզի քեզ գգվել
Հոգուս դղյակում:

ՀԱՄԱՐՅԱ ՏՈՆ

1.
Խտղտացնում եմ քաղաքիս բոհեմը,
սրա մեջ՝ քեզ:
Ախր քո ի՞նչ բանն է անկախ լինելը,
երբ սրա մեջ դրել՝ գրում են,
գրում են վրադ,
հետո ռեպ կկարդան հոգուդ մեջ.
ծանր է
քեզ պատին դեմ արած
երգելը,
սիրելը...

Ամբոխը քեզ ուրիշ տեղ է քաշում,
բայց ինձ այստեղ են կանչում,
հրում են՝ զարթնի՛ր քո ձևի:

Հիմա «իմ ձևի» զարթնել եմ՝
զարթնեցնելու ձևն եմ կորցրել.
կտցում եմ սիրտս ու կերակրում քեզ.
սովորական կտուցով անսովոր մեկն եմ,
ով փոխակերպվելու է սովոր,
և որին սատանան ոտք է գցում մեկ-մեկ
ու թքում... ծաղկի պես:

Ծաղկի պես ո՞ւմ դեմքին եմ հիմա:

2.
Մեկ է, դու էլի իմ մաղն ես՝
ծակ սերը,
ինձ ետ ես բերում օրվա կարկատանից,
կանգնեցնում պարսպին գոռոզ,
ինձ ետ ես գցում հմայքի կապարձներից
և հուշում կանխասացի սաստումը՝
ձեր բարությունը
պիղծ լաթի պես մի՛ նետեք...

Ու բարությունդ սխկում է,
մանրացնում,
կպցնում իմ հոգին
անկախությանդ պաստառին,
որ ինձ ծածանի ամեն ինչի հետ,
ու հետո ռեպ ոռնան հոգուս մեջ.
ծանր է
քեզ օրվան պահ տված
երգելը,
սիրելը...

Ռոզա ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

* * *

Վաղուց
ինձ փոխանակել եմ
լապտերի ձեթի հետ
ու ճտճտալով վառվում եմ,
իսկ դու հեգնում ես՝
ի՞նչ ճտվտիկն ես...

* * *

Վաղուց ուզում էի ասել՝
քո ձիու գավակը բաղեղով կպատեմ,
կպատմեմ լուսնի սահանքին...
Մի՛ թող, որ պատկերացնեմ ինչեր...

* * *

Վաղուց
փորձում եմ իմ թռչուն լինելը քո օդում,
փորձում եմ իմ խաղաղությունը:

...Ո՞ւր կընկնի պայծառացումս
մթնշաղի պարիսպների վրայով,
և կընկնի՞ այսքան ժամանակ
կանգուն մնացածի զմայլումը:

Արևը մտածում է իր արտացոլքի մասին.
քոքված, քոքվա՜ծ է արևը...

Սոնա ԱՆՏՈՆՅԱՆ

ՎԻՃԱԿՆԵՐ

* * *

Թափանցիկ
շնչահեղձ թափանցիկ է
թախիծը Արուս տատի
ցավն օրորում է նրան
նրա լացը
Թթվածնով հագեցող
լացը և
հոսում են
դեմքը, խորշոմները նրա

Ի՞նչն է քեզ անհանգստացնում, տատ...

Ես չդիմացա
Արուս տատի թախծին
միակ որդու
մինուճարն էր դեռ
անհայտ անուն այս 44-օրյա
պատերազմում...
Հոգին էր պատրաստ տալու
իսկ նրան ասում էին՝ տատ,
դու շնչիր
շնչիր
այս ծանր թավիշը
այս լլկող գարունը
շնչիր

* * *

Վրայովս եմ հանում
էլաստիկ թախիծը
քրտնել կպել է մարմնիցս
պոկում եմ
չէ, հաստատ չի բուրում
անհոտ է, թափանցիկ
թաց է, որ քամեմ՝ չի քամվի
այստեղ լուսավոր սահուն է պտտվում
հույսը
այստեղ քամի չկա և
սրտիս ծայրին ամեն օր
միշտ
մի նոր թռչուն ակապելլա է երգում

ինձ սիրում են.
սիրտս լցվում ու
լցվում է
ինձ սիրում են:

* * *

Շատ կարևոր
քո գրչի տակ
ինչ խլիրտներ ասես
թող թռվռան
քո սրտի տակ,
ինչ ալիքներ ասես
թող ծփծփան
(խրատող է այս տեսակը)
ինքը օդդ քլորաջուր կանի,
իսկ դու խորը շնչիր՝
շունչդ պահիր...
Ենչիր այս թաց երեկոն՝ ուղիղ 21.21
թաց գազոնը շնչիր
թաց քլորոֆիլը շնչիր
շնչիր

Այստեղ երկինքը դիպած է
ամենաբարձր պատուհաններին,
իսկ աստղերը
վառվող լույսերն են
այնտեղ...

Անդրանիկ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԵՐԳ ԱՌՎԱԿԻ

Այգու միջով հոսող մի առվակ եմ,
Թափառում եմ, երգում հանց կաչաղակ,
Ծառերն են ծափ տալիս հազարաձեռք,
Երբ զեփյուռն է լքում
Իր ամրոցը խաղաղ:

Իր ամրոցի կողքով, ես մի առու,
Լուռ ու մունջ եմ անցել, որ չարթնանա,
Բայց զարթնել է, եկել, ջրերիս է խառնում
Արտացոլքի դողն իր
Ու երգն անմահական:

Ու զեփյուռի երգին գրկընդխառը,
Ու ձյուղ–հովհարների հովի ներքո
Ես անցնում եմ, ժպտում, ու ժպիտն իմ
Ծառից ծառ է անցնում,
Ու ժպտում են հերթով:

Ծիծաղում է ահա այգին իմ կույս՝
Իր ծիծաղով քաղցր, հազարբերան,
Ու ես քչքչում եմ հանց արշալույս,
Հոսում հեքիաթի մեջ
Թանձր և իրական:

* * *

Մենք դնդնում էինք շարունակ
Քո ականջների մեջ,
Եվ դու քնեցիր, խաղաղությո՛ւն:

Մենք քո կարոտից սթափված՝
Սկսեցինք բղավել, գոռգոռալ,
Բայց դու չարթնացար:

Դու անհաղորդ մնացիր:
Մնացիր հեռու ու դառնորեն սիրելի՝
Հանգչելով
Մեր օրորոցայիններով զարդարված
Մահիճի մեջ...

ՏԵՍՆԵՍ ԿՀԻՆԻ՞

Ջուրը ինքն իրեն եթե հանդիպի
Երկնքի կապույտ հայելու խորքում՝
Տեսնես կհիշի՞,
Կասի՝ իր խիղճն է,
Որ կաթկթում է անձրևի տեսքով,
Ի՛ր ընդվզումն է,
Որ մոլեգնում է ծովերի վրա՝
Տարուբերելով նավերի երթը
Դեպի ափերը մոռացումների...

Թե ջուրն ինքն իրեն մի օր հանդիպի,
Կթեքվի՞ տեսնես ինքն իր ականջին
Ու կշշնջա՞ ցավով, որ ինքն է
Բաբախը այս մեծ անորոշության:

Աստված քայլում էր ջրի վրայով,
Որ հիշողություն ջուրը ունենա...

* * *

Ես մի երազ տեսա –
Մի օդեղեն նավ էր,
Մի ալեկոծ ծովում օդե մի նավ,
Տատանվում էր սիրտս
Ու հավատս նաև,
Չէր տատանվում միտքս, միտքս՝ բնավ:

Ինչքան ասի՝ գնամ՝
Երազն հետս եկավ,
Ասի՝ գուցե մտնեմ երազիս մեջ,
Սակայն անշոշափ էր –
Ո՛չ արյուրն էր, ո՛չ կավ,
Ոչ հագուստով էր այն ու ոչ էլ՝ մերկ:

Բաց չթողի նրան,
Չթողի որ գնա,
Գնա, կորչի ցավոտ օրերի հետ,
Ես գտել եմ նրան,
Գիտեմ՝ որտեղ է նա,
Օ՜ իմ սրտի տեսիլք, իմ աչքի հևք...

ԱՆՆԱՆԱՅԻՆ ԱՂՈԹՔ

Մատնեմատին ցայգի եղյամն է պսպղում,
Ու զեփյուռն է քանդում կոծակները աշնան,
Այս բարձրացող լույսը
Իր օրհնանքն է հղում
Վերևներից՝ խաղաղ ու ներդաշնակ:

Աղոթքներ են թափվում մանանայի հանգույն,
Տերևներ են ծորում ու դառնում են խաշամ,
Տապալվում է գետնին
Մեռնող ամեն մի գույն.
Մահով ճանապարհն է բացում աշնան...

ԱՆՅՈՒՄՆԵՐ

Գագիկ ՍԱՐՈՅԱՆ

1.
Կգա անցման պահը.
Մահն ինձ կանձնավորի
Անհայտ փաթիլի մեջ...
Ծածուկ մի ձայնավոր
Ինձ կտեսնի ինչ–որ
Արձագանքի խորքում՝
Որպես մեկի սրտից ընկած մորմոք...

2.
Կգա անցման պահը.
Մի երեխա կգա՝ էջանիշը ձեռքին,
Որ հարցնի,
Թե որ ելևէջի կողքին դնի իմ երազը...

3.
Կգա անցման պահը.
Թռչուններից մեկը,
Որը թափանցիկ է,
Ինչպես անվերապահ հոգի,
Ինձ մի երկինք կտա՝
Իմ թևերին հարմար ու իմ սրտին...

4.
Կգա անցման պահը.
Ոչ մի անակնկալ
Ինձ չի շեղի լույսից...
5.
Կգա անցման պահը:
Եթե ա՛յն կողմերում
Երիվարներ վարգեն,
Լուսնալույսը ծաղկի,
Սաղմոսերգու, ասուն ջրերի մոտ
Քե՛զ կհիշեմ կրկին,
Իմ նախնական սրտով
Ապրած մարմի՛ն...
Ինչքա՜ն ինձ դիմացար
Տեղին ու անտեղի...

6.
Կգա անցման պահը.
Սերն ինձ կանձնավորի
Ոմանց սրտերի մեջ:
Ա՛խ, ի՜նչ զարմանալի
Վերափոխման վիճակ
Կպարուրի հոգիս...

7.
Կգա անցման պահը.
Զարմանք կոչվող հավքը
Կբողբոջի ծառին մայրամուտի,
Եվ մի տերև կընկնի իմ աչքերից...

8.
Կգա անցման պահը.
Ես կհիշեմ մեկին՝
Որպես չընկած արցունք...

9.
Կգա անցման պահը,
Եվ նույն դռան երկու հարավներից
Ինձ կդիտեն սիրով օծվածները...

10.
Կգա անցման պահը:
Ըստ իմ մեղքի բեռան՝
Կծանրանա աստղը...

* * *

Հավատի երկրից աքսորյալներին
տանում են դեպի տանջանքի հովիտ.
կորցրել են եզերք, կորցրել՝ տուն ու տեղ,
այս երկնքի տակ ինչ–որ կա թովիչ,
գետի ջրերը ապսպրանք են,
օրը՝ չորացած կեղև խնձորի,
և խավարամած պատերի միջև
միայն երազն է կայծկլտում նորից:



Ռոբերտ ԵՍԱՅԱՆ

* * *

Երբ ասելիքի հողմն է ծառս լինում
պարիսպներն ի վեր՝
ձգտելով կախվել
անհուն լռության սեգ գագաթներից,
գաղափարի նոր թռչունն է փնտրում
հայացքի քիվեր,
հիշողությունը
կանգնում է քարե ոտնաթաթերին:

Բացվում է մի դուռ բառերի միջև, և
տարածությամբ
փոթորկվում է սիրտն արագիլների,
երազանքների դոփյունից հիմա
ընկնում է մի թամբ,
ճամփան է փրկվում սուր մագիլներից:

Եվ պսպղում է տողի ընդերքում աղը
անհայտի,
բառերի համը հասունանում է
նոր հաղորդությամբ,
իսկ ինքնությունս լռության քարե
սահմանը հատել,
բարձրանում է վեր՝
միավորելով ոգին փրկության:

* * *

Տողը կանգնել թռչնի պես առավոտի ափի մեջ,
բացում է իր թռիչքով հորիզոնը փետուրի.
այդպես նրա երգերով անծայր եզերքն արբում է,
ճյուղերն ի վեր սարսուռի ելնում է մի փոթորիկ:

Մեր աղոթքը արծի՞վ է, թե՞ խարույկ է մի անշեջ,
վեհ ու ճերմակ ճախրանք է Շուշին լեռան թևերին,
փրկենք Կենաց մեր քայլը ճանապարհի ոգու մեջ,
քանի լուսա՛յգ է ծորում հիշողության կեղևից:

Մոտենում եմ ինձ հաճախ նախնիներիս քայլերով՝
նրանց ոգուց քաղելով խորհրդավոր աստղի փայլ,
նոր ամրոց եմ կառուցում հիշողության քարերով,
ոտնահետքիս ջահերը լուսավորում են ճամփան:

Այնտեղ դեռ տող է գրում հրեշտակը առանց ինձ,
հոգու բառերն այրվում են Տիրոջ կանաչ օրհնությամբ.
անսանձ մտքերը պոկվում հիշողության առանցքից,
ոգու ուժ են հավաքում արգելոցում լռության:



Սերգեյ ՎԱՐՈՍՅԱՆ

ԽՈՍՔ ԻՄ ՈՐԴՈՒՆ

Ես հենված էի քո հզոր ոտքերի վրա,
Եվ ինձ թվում էր, թե դա իմ ոտքերն են,
Ես հենված էի քո հզոր ձեռքերի վրա,
Եվ ինձ թվում էր, թե դա իմ ձեռքերն են:
Քո երազանքը իմ երազանքն էր,
Քո սերը, կինն ու երեխան թանկ են ինձ համար,
Որովհետև դա քո սերը, կինն ու երեխան են,
Քո նպատակը իմ նպատակն էր,
Դու մեր խաղաղ ծերությունն էիր
Քո ափերի մեջ պահում ու պահպանում:
Եվ ես հպարտ էի քեզանով,
Եվ ես հպարտ եմ քեզանով,
Տղա՛ս:

Հիմա,
Ես այս բանաստեղծությունը թողնում եմ կիսատ
Ու ողբերգական,

Ինչպես որ քո կյանքը մնաց ողբերգական
Ու կիսատ,
Միա՛կս...

* * *

Բանաստեղծությունը,
Որը ո՛չ ուտվում է, ո՛չ հագնվում,
Ո՛չ գեղեցիկ իր է, որ դնես սենյակում,
Ո՛չ օգտակար է, որ հոգսերդ հոգաս,
Նման է ջրվեժի շառաչի,
Որ հետ չես կարող տանել,
Նման է քնքուշ բույրին
տարատեսակ ծաղիկների,
Եվ ձեռք է քամու,
Որ շոյում է վարսերդ սիրահարված աղջկա նման,
Որն իրապես չկա,
Եվ դու օդին ես փարվում,
Գրկում ես իրանը քամու,
Դրա համար էլ
Բանաստեղծությունը
Ո՛չ գնվում է և ո՛չ էլ վաճառվում,
Ո՛չ հոնորար են տալիս նրա համար,
Ո՛չ էլ հոնորարի խոստում,

Չեն հասկանում նրա արժեքը գեղեցկության,
Հմայքը անընմբռնելի,
Եվ վախ է ներշնչում,
Որովհետև անհասկանալի է
Սովորական մահկանացուների համար,
Եվ միայն հեթանոս աստվածներն են,
Որ խոսում են բանաստեղծության լեզվով:
Վերցնել չի կարելի,
Կշռել չի կարելի,
Վաստակել չի կարելի բանաստեղծությունը,
Եվ սա իմ դժբախտությունն է,
Դժբախտությունն է բոլոր իսկական պոետների,
Որ պտտվում են այս արեգակի շուրջ
Ծակ գրպաններով,
Հպարտ ու անկրկնելի
Իրենց բանասեղծությունների նման:

Սամվել ՄԱՐԳԱՐՅԱՆ

* * *

Իմ թարթիչներից մի աստղ է կախվել
Եվ թրթռում է, ուր որ է կընկնի,
Եվ տեսիլքներն են նորից կախարդել,
Սիրտ է սողոսկում ցավը սգերգի:
Օրը թեքվում է և նահատակին
Երգով, նվագով պարզում են երկինք,
Սգերգն հուշում է՝ իմացեք մարդիկ
Հավերժական չէ տունը տքնանքի:
Խոր շիրմափոսը իր գիրկն է կանչում,
Ցավերն են հոգու ծառանում երկինք,
Հանգուցյալին բուռ-բուռ հող են նվիրում,
Բայց մարդ էլ կա չի կամենում ոչինչ...
Շիրմաթմբի մոտ սուգը ավարտվեց,
Մարդիկ ցրվում են, կանչում է կյանքը,
Բաժակաճառի պես փուչ ու սնամեջ
Այնքան էժան է այս տվայտանքը:
Ու ժամանակի մրրիկների դեմ
Շիրմաքարերն են ծերանում, մամռում,
Կործանվում են փառք, երազ ու հույզեր,
Եվ հողեղենից լոկ հուշն է ապրում:
Լոկ հուշն է ապրում և հիշատակը,
Փուչ են հոգսերը, կրքերն առօրյա,
Սխրանքի համար ապրելը փառք է,
Փառք է արարման տենչանքը ագահ:

ԸՆԿԵՐՈՋՍ

Քեզ հետ ցավ ու հաց եմ կիսել,
Երազանքներ ու հուրեր,
Երազել ենք դյութանք ու սեր,
Անրջական հեռուներ:
Երազել ենք մեր պապերի
Հույսը գետնին չթողնել,
Մեզ վստահված հրաշքների
Մեկը հազար դարձնել:
Ինձ կհասնես, եթե ձայնեմ,
Քո խոսքերը հողմեր չեն,
Իմ լավ ընկեր, քո սրտի մոտ
Իմ զանգերը կհնչեն:
Քեզ հետ ցավ ու հաց եմ կիսել,
Միշտ տեսել եմ քեզ շիտակ,
Քեզանով է իմ մեջ ծաղկել
Եղբայրության ուխտը թանկ:

* * *

Ասում եմ՝ կգամ... չեմ կարողանում,
Ոտքերս հողում թաղվում են, թաղվում,
Փշրում եմ անվերջ կապանք ու շղթա,
Ճակատագիրն է նորից շղթայում:
Ճակատագիրն է նորից շղթայում
Եվ ես մնում եմ իմ հողին կանգնած,
Իմ տարիները չվում են, չվում,
Ես ծերանում եմ, գթա ինձ, Աստված:
Ես ծերանում եմ, գթա ինձ, Աստված,
Իմ զառ օրերը չվել են, չկան,
Բայց դեռ տենչում եմ, ես միշտ կանչում եմ
Իմ երազների հրաշք աղջկան:
Իմ երազների հրաշք աղջկան,
Որ երազներում ինձ հուր է բերում,
- Արի, ասում է, ճախրենք միասին
Աստծո սրբազան կապույտ ափերում:

Վալերի ԱՆԱՆԻԿՅԱՆ

ԾՆՆԴԱՎԱՅՐ–1

Աբուլն իմ վրանն է ձյունաթագ,
Փարվանան՝ երկնակախ օրորոց,
Ամպերի փրփուրն ինձ վերմակ,
Ջավախքը՝ գուրգուրող մոր ծոց:
Երկինքը իմ պատուհանն է կապուտակ,
Արտույտները՝ բարի հեքիաթասաց,
Արևն՝ իմ վրանից կախ զանգակ,
Արտերն՝ օրհնված սեղանհաց:
Հովերն՝ ինձ հետ խաղացող ընկեր,
Ծաղիկներն՝ իմ աչքերին ծիծաղ,
Իմ լեզուն սարի աղբյուրն է մեր,
Ես ոգին՝ այս բնության չքնաղ:

ԾՆՆԴԱՎԱՅՐ–2

Քո ամեն մի ձորի ծոցում՝
Մի պլպլան աղբյուրի աչք,
Քո ամեն մի քարի շրթին՝
Հրաշքների վառվող շաղիկ:
Քո ամեն մի սարի փեշին՝
Երազներով ծոցվորած արտ,
Ու արտերի ոսկեծուփի–
Ու տապի մեջ պարող լորիկ:
Աբուլը՝ պապ՝
Գլխին դրած ձյունե փափախ,
Փարվանան՝ տատ,
Դեմքին՝ լուսե քողը շարմաղ,
Երկինքը՝ հանց աղոթքի տուն,
Հողը՝ ծաղկի ուլունքաշա՜ր...
Արդյոք կա՞ ուրիշ մի տեղ
Այսքան բարձրիկ, նախշուն աշխարհ:

* * *

Առած իլիկը իր հին
Մայրս բուրդ էր մանում,
Արծաթ լույսը մազերին,
Մի մեղմ թախիծ հայացքում:
Մանվում էր բուրդն սպիտակ
Ու թելվելով կարկաչում,
Ասես մորս ձեռքում տաք
Ձյունե կարոտն էր հալչում:
Սուզված անհուն հուշերում,
Նուրբ մատներին՝ թեթև դող,
Ասես մազերս էր շոյում
Մայրս հոգնած ձեռքերով:

* * *

Աշո՛ւն, քնքո՜ւշ, դեղնահե՜ր,
Աշո՛ւն, տխուր հեռացում,
Իմ հոգեհույզ կորած սեր,
Կարոտ–թախիծ իմ անհուն:
Այնպես շքեղ ես զուգվել,
Այնպես գունեղ ու շռայլ,
Այնպես խանդոտ հրդեհվել՝
Գեղուհու պես ոսկեփայլ:
Աշո՛ւն, քնքո՜ւշ, դեղնամա՜ծ,
Հուշիր դու ինձ, թե ինչպե՞ս
Հոգուս կարոտն ամբարած
Քեզ պես անբոց այրեմ ես:

* * *

Օրերի մեջ վեր ու վարող
Դարձած թախիծ մի հեզ,
Քարշ ենք գալիս փողոցներով
Իմ երազն ու ես:
Հույսից խաբված, օրորվելով՝
Խորը հարբածի պես,
Անցնում ենք լուռ, քայլամոլոր
Իմ երազն ու ես:
Մեր փնտրածն ենք գտնում հանկարծ,
Որ լուռ երգ էր մեզ պես,
Հրձվում ենք հարստացած
Իմ երազն ու ես:
Օ՜, ձեր առջև աշխարհ ու կյանք
Ընդվզումով մի կեզ,
Տեղ ենք փնտրում արևի տակ
Իմ երազն ու ես:



Գևորգ ԹՈՒՄԱՆՅԱՆ

* * *

իմ մահվան օրը
երկրպագուհիների
զանգվածային ուշաթափություն
չի գրանցվի
հանրապետությունում
սգո օր չի հայտարարվի
նախագահը ու վարչապետը
հերթական ծաղկեպսակներով
ու տխուր դեմքերով
մեր տանը չեն հայտնվի
դագաղիս մոտ
սիրուհիներս
ապօրինի զավակներս
լեղապատառ լաց չեն լինի
գրչակից ընկերներս
ինձ աստվածացնելով
երեք օր ու գիշեր
պատվո պահակ չեն կանգնի
գերեզմանս չի դառնա ուխտատեղի
և կլոր ամյակներիս
դպրոցականները
բանաստեղծություններս սերտած
ինձ չեն այցելի
իմ անունով հրապարակներ
և փողոցներ չեն անվանակոչի
նույնիսկ
աշխարհի ավազահատիկներից
հազար անգամ շատ
աստղերից մեկը
իմ անունը չի կրի

* * *

Անցնում է երիտասարդությունս՝
Միագիծ, միապաղաղ,
Առանց խիստ հուզումների, ցնցումների,
Առանց մեծ կրքերի, հիասթափությունների,
Մեղքերի, ողբերգությունների:

Անցնում է երիտասարդությունս՝
Հրաշքների մեջ չհայտնված,
Հեքիաթների չպատահած,
Զարմանքի, զմայլանքի մերձեցումից չնվաղած:

Անցնում է երիտասարդությունս՝
Մետաֆիզիկայի հոսանքներով
Այլ ափեր չքշված,
Մոգության պարտեզներում
Ծաղիկներ չհասունացրած:

Անցնում է երիտասարդությունս՝
Ինչպես լատինամերիկյան սերիալներն են անցնում,
Ինչպես քաղաքական նորությունները, գովազդները,
Լուրերը՝ տխուր և ուրախ:
Ինչպես հիմա փայտն է անցնում
Մեր վառարանի միջով դեպի վեր, դեպի երկինք,
Բայց որպես ծուխ:

Անցնում է երիտասարդությունս՝
Տիեզերական քաղաքակրթություններից անտեղյակ,
Աստղային ճարտարապետությունից անգետ:

Անցնում է երիտասարդությունս՝
Չուսումնասիրած վեդաները,
Աստվածաշնչի Բանը չհասկացած,
Դաոյի հանգստությունը և անգործությունը չապրած,
Քրիշնայի վերանցական ժամանցներին անմասնակից,
Բուդդա չդարձած:
Անցնում է երիտասարդությունս՝
Հայրենիքի հնձանում գինի չդարձած,
Գրականության փեթակում
Հաճախ բոռի վիճակով:

Անցնում է երիտասարդությունս՝
Ինչպես օրացուցային տոներն են անցնում,
Ինչպես ամանորները, զատիկները, վարդավառները,
Ինչպես պատանությունս անցավ,
Ընկերներս, խաղերս, երազներս,
Ինչպես ամեն ինչն է անցնում
Այս երկրի վրա:

Լուսինե ԱՂԱՋԱՆՅԱՆ

* * *

Ա՜խ դուք փաթի՜լ-փաթի՜լ վրաս իջնող հույզեր,
Գլխիս թափվող ձմռան ծերմա՜կ խոհեր վերին,
Թե մտքերիս հանկարծ անձայն հալվել ուզեք,
Իջե՛ք անսեր կյանքիս թե՜լ-թե՜լ սպիտակներին:
Բյուրեղացա'ծ հուշեր մուժե փաթիլների,
Հա՛մ իջնում եք, հա՛մ էլ կարծես ընկնում եք ցած,
Թե թևերս պարզեմ, մե՛կ է, ես շա՜տ քիչ եմ,
Ո՞նց բոլորիդ գրկեմ, որ դուք հալվեք անցավ:
Եկեք հալվեք գլխի՛ս, աչքի՛ս վրա հանգիստ,
Չձռձռա՛ք «ախ»-ով, ու ձեզ չտրորեն,
Իջե՛ք սրտիս անհաս ցորենին ու հասկին,
Որ ջուր դառած հոսեք դեպի գարուն նորեն:
Դուք փաթիլ-բառեր եք՝ իջած խոսքով վերին,
Կամ աղոթքիս թուղթն եք՝ պատառ-պատառ մերժված,
Ես հանո՛ւն ձեր սիրո վառ եմ պահում լոյսն իմ,
Դուք իմ հոյսին՝ իբրև մխիթարանք մի թաց...

* * *

Սերն աչքե՛ր ունի, ո՛չ տեսողություն,
Ավազն է թվում գետակի ալի,
Երբ սիրել գիտես, բանաստեղծում ես
Տողատակելով անտեսանելին:
Ծնիկների պես սերն էլ է ծնվում,
Անպաշտպա՜ն, քնքո՜ւշ և աչքերն էլ կույր,
Գուցե շունն էլ է կարոտից կծում,
Նման այն սիրուն, ում լքել են լուռ:
Սերը նայում է առանց աչքերի,
Տան նման, որը չունի պատուհան,
Տանի՛ք էլ չունի, ում վառ աստղերը
Ժպիտ են վերից խրատում ներման:
Սերն աչքեր չունի, սերը հայա՜ցք է,
Քարացա՛ծ, շշմա՛ծ, մի կետի գուցե,
Ում ձեռքին դանդաղ սառչում է թեյը,
Բայց վայե՜լք է, երբ բուրում է ուրցը:
Սերը սիրում է բարուրվել մտքով,
Ու կրքի կաթով սնվել ակամա,
Իսկ ես ստնտու, ով մի հարց ունի՝
Մեծանա, տեսնե՞ս ինչ պիտի դառնա:

* * *

Պատմեմ երազս: Ես լուսին էի,
Նուրջս աննման, պոետիկ թախիծ:
Միայն մի թեթև գլխապտույտ կար,
Ամենից վերև լինելու ահից:

Ես լուսին էի՝ ոչնչից կախված,
Իսկ Աստված ինձնից մի փոքր հեռու,
Դրսիս լոյսերը վառելու համար՝
Ներսումս կսկիծ, այրոց ու մրմուռ...

Համբույրի պահին մի սիրահար զույգ,
Երբ փակ աչքերով դարձան երկնքին,
Ինձ մոտիկ աստղը հրեցի ներքև,
Հանուն նոր ծնվող սուրբ երազանքի:

Տիեզերական ցավերով ներսի
Լուսավորում էի սերը՝ կաթն ծիր,
Աստված հավան էր, ժպիտն երեսին
Հորդորում էր ինձ՝ քի՛չ էլ դիմացիր:

Գիշերն ավարտվեց: Հեռացավ տղան,
Աղջիկն էլ գնաց իր եկած ճամփով,
Էլի մնացինք՝ ես ու իմ Աստված,
Ես հանգած, իսկ նա իմ դեմ՝ ամոթով:

Լևոն ԲԵԺԱՆՅԱՆ

ՏԱՐԲԵՐ

Կարապ էր, ձերմակ, փետուրները խուճուճ,
Քիթը ցրտին՝ լավա, Պոմպեյից էր փախել,
Մի պատմություն ուներ շրթունքներին պուճուր,
Նուրթը թաց էի պահում, որ կափկափեր:

Մի պատմություն ուներ շրթունքներին հագուրդ,
Եվ սարից էր գալիս, և իմը չէր,
Իմ աստղաքաղց լճում թևը թրջել գիտեր,
Հետո թռչել գիտեր առավոտ շուտ...

* * *

Օձ էր, կծու խոսքով, թույն էր բուրում,
Լեզուն ճաք էր տալիս լեզվիս վրա,
Գալարվում էր սիրուն, ձգձգում էր այնքան,
Որ իմ մարմնից անգամ բան չէր մնում:

Գալարվում էր սիրուն, օձ էր բարակիրան,
Աչքս աչքին ընկավ՝ աչքը փակեց,
Կրակների միջից կարոտները եկան
Եվ կոպերից այն կողմ մեկը թակեց...

* * *

Ձուկ էր, ալիքների հույսին, աչքը վտակ,
Խորն էր սուզվում ծոցում, լողալ գիտեր,
Ծովը գիտեր՝ ինչ կար թեփուկների տակ,
Եվ թե որ ջրերում պիտի խեղդեր...

Ձուկ էր թեփուկ–թեփուկ՝ ջրի համբույր,
Ծովերից էր եկել, Կարմիր ծովի ծափից,
Երբ խաղաղ էր հոգիս, շրջազգեստը քշտում
Դեպի ինձ էր վազում շիկնած ափից...

* * *

Կատու էր, ծարավ, ասեցի ջուր բերեմ,
Ջուրը դարձավ գինի, սերը՝ կատակ,
Մռմռոցից կրծքի քիչ էր մնում հարբեմ
Ուր է՝ պոետ լինեի այն ժամանակ:

Կատու էր, ծարավ, շրթունքները ճաքած,
Ինձ գարուն էր բերել գիշերաչափ,
Ինը կյանք է անցել, ինն էլ կանցնի առանց...
Չափահաս են կարոտներս արդեն...

* * *

Արծիվ է, աչքը սուր, եկավ իջավ ուսիս,
Ինչքան էլ վեր ելնում, էլի նայում է վեր,
Սիրտը՝ արյուն–կրակ, երազն՝ ազատ
Մասիս...
Առնելու է մի օր մեր երանին թևեր:

Թևերը լայն բացած, ասես ամպ է գրկել,
Ասես ամպ է ճզմում իմ վերքերի վրա,
Բացվի՛ր ուսիս, սիրո՛ւն, հոտդ առնեմ արդեն,
Ես էլ մարդ եմ, գիտե՞ս, վաղվան ինչո՞ւ մնա:

ԱՐՓԱՉԱՅԻՆ
Լռություն է իջել Արփաչայի շուրթին,
Անուշ քուն է մտել խոր անդունդում,
Ամռան շոգն է խլել քչքչանքի փոշին,
Կարծես գետի սիրտը չի բաբախում:

Ետ են քաշվել փրփրոտ պաղ ջրերը երգող,
Հազար քարե կղզի ծնել ծոցում,
Սգավոր է թվում լռությունն այս տիրող,
Կարծես գետի ափով դի են տանում:

Զարմացած են նայում ժայռին ուրց ու մասուր
Ու փսփսում իրար մի լուր ցավոտ,
Ափը առատորեն թարմ կանաչ է հագնում,
Ու լողում է գետով մի հին կարոտ:

Շուտով աշնան վարար անձրևները կգան,
Ու կլողա գետը հունով լեցուն,
Ափ ու կղզի ծածկած քչքչանքի փոշին
Անուշ քրքիջ կանի ու չարություն:

ՊԱՐԵՑ ԱՇՆԱՆ ՔԱՄԻՆ
Եկավ դեղին աշուն,
Մշուշն իջավ սարին,
Իջավ արծաթ ցողով,
Հոգնած նստեց քարին:

Արցունք կաթեց քարից,
Շոյեց ցողը հողին,
Հողն արևին հիշեց
Ու կարոտեց շողին:

Եկավ նախշուն աշուն,
Փռվեց դեղնած դաշտին,
Պաղ անձրևը շուրթին՝
Պարեց աշնան քամին:

ԻՄ ՇՈՒՇԻՆ
Արյունս խառնեցի սև հողիդ,
Բայց բաժին հասավ ուրիշին,
Օտարն է աղոթում քո վանքում,
Տնքում է վիրավոր իմ Շուշին:

Քո հողից արևն էլ խռովեց,
Մութ գիշեր է իջել քո սրտին,
Երբ կգա նորից արշալույս,
Որ նորից շողշողա իմ Շուշին:

Հարություն ՍԱՐԳՍՅԱՆ

* * *
Ամպը իջավ սարից,
Աչքիս լույսը փակեց,
Աշնանային մի ցավ
Հոգուս խորքում ծաղկեց:

Աշունը սև հագավ,
Հետն էլ նոր ցավ բերեց,
Երբ թշնամին վայրագ
Հողից մի թիզ պոկեց:

Ցավոք, լռեց Աստված.
Աշխարհն էլ աչք փակեց,
Ցավը մահից դաժան՝
Հոգուս դուռը թակեց:

ԳԻՇԵՐ
Մութն է կախվել ամպի փեշից,
Իրիկունն է իջնում կամաց,
Նինջն է իջել ծաղիկների
Թերթիկներին՝ փափուկ ու թաց:

Գուրգուրում է մութը սիրով
Արտ ու ձորի խոտ ու քարին,
Գալարվում է ժայռով ներքև,
Իջնում, փարվում անդունդներին:

Մութ երկնքում որսի ելան
Աստղիկները հատիկ-հատիկ,
Ու գիշերով ձորի միջին
Փայլեց մի լուռ լուսատտիկ:

Երազ ապրեց աշխարհը ողջ՝
Գիշերվա պաղ մթով հարբած,
Աստղ, լուսին, ծաղիկ ու քար
Լուռ քնեցին մինչ լուսաբաց:

Ստեփան ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՊԱՊԸ ԳՆԱՅ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ

Նատ տխուր է մեր Նունեն...
Ո՞նց ուզեցին համոզեն,
Չեղավ լացեց անկյունում.
–Մանկապարտեզ չեմ
գնում...
–Է՞հ, չի գնում՝ չգնա,
Թողեք տանը նա մնա,–
Ասաց պապին, հագնվեց,
Թոռան գոգնոցը կապեց...
Ձեռնափայտն էլ իր չառավ,
Ու թոռանը նա դարձավ.
–Ա՛յ աչքովդ հիմա տես՝
Ո՞նց կգնամ ես պարտեզ.
Մանկապարտեզ կգնամ,
Միշտ էլ այնտեղ կմնամ.
Կուտեմ կոնֆետ ու կարագ,
Տանձ ու խնձոր, կարկանդակ,
Կնկարեմ, կխաղամ,
Ձբոսանքի կգնամ:
Ու երբ լինի իրիկուն,
Նունեն թող գա՝ բերի տուն:
Նունեն հենց որ այս լսեց,
Լացուկոծը շուտ կտրեց,
Ասաց,–տանը չեմ մնա
ես էլ, ես էլ կգնամ...
Ու երբ լինի իրիկուն
Իմ պապի հետ կգամ տուն:

ՆԱՏՆ ՈՒ ՔԻՉԸ

Երբ Նաիրան
Ելավ քնից,
Հավերին կուտ
Տարավ տնից,
Թասը լցրեց
Մի քանի բուռ,
Ձայնը գցեց
Պարտեզ ու դուռ,
Կանչեց՝ ջո՛ւ–ջո՛ւ,
Չալ հավիկներ,
Եկեք, կերեք,
Իմ լավիկներ...
Տատն ասաց.
–Բալի՛կ ջան, տար,
Բայց հավերին
Այդքան մի՛ տա:
–Իմ տվածը
Ի՞նչ է, ա՛յ տատ,
Քո բուռն հո չի,
Որ լինի շատ:
Իմ բռի մեջ՝
Տասը կուտիկ,
Քո մի բուռը՝
Հազար հատիկ:

ՎԵՃ

Պապն ու տատը վիճեցին,
Հետո իրար զիջեցին,
Պապը թեման շուտ
փոխեց,
Խոսքը կտուրը գցեց:
Փոքրիկ Հայկը վազեց
դուրս,
Կտուրը ելավ սուս ու փուս,
Ուզեց գտնի, ետ բերի
Պապի խոսքերը թերի:
Պապը տեսավ, հասկացավ
Ու խրատով նա դարձավ.
– Եթե գտնես ետ բերես
Վեճը նորից կբացես,
Լավ է՝ իջնես ու գաս տուն,
Հանգիստ խղճով մտնես
քուն:

ՏԱՏԻ ՇԱԼԸ

Տատի շալը
Տաքուկ, տաքուկ,
Տատի շալը՝
Փափուկ, փափուկ:
Տատը՝ շալը
Ծնկից պապի
Բերեց թոռան
Մեջքին կապի,
Որ լավանա
Մրսած տեղը,
Ծալն է տատի
Միակ դեղը:
Տատի շալը
Դեղ է կարգին
Ձմռան ցրտից
Մրսածներին:
Տատի շալը
Սիրուն, նախշուն,
Առնես վրադ
Ու մտնես քուն:
Երազ տեսնես,
Ու հիանաս,
Հենց որ զարթնես,
Առողջանաս:

ՀՈԳՆԱԾ ՊԱՐԱՆԸ

Տեսե՞ք, տեսե՞ք Մարանը
Ամուր բռնել պարանը,
Ինչակտուր խաղում է,
Ու ոչ ոքի չի տալիս:
Մոտ է գալիս Նաիրան,
Տուր մի քիչ էլ ես խաղամ,
–Չէ՛,– ասում է Մարանը–
Նատ է հոգնել պարանը:

Պատվական ՂՈՒԿԱՍՅԱՆ - 90

ՎԵՐՋԻՆ ԾԱՂԻԿԸ

Նավ բարձրացողների հետ մի փոքրիկ ծաղկեփունջ էլ բարձրացավ: Նավի շարժվելուն պես ծաղկեփունջը երևաց ներքևի հարկում՝ իմ ոտքերի տակ՝ բազրիքին սեղմված նուրբ ու սպիտակ մատների մեջ: Ծաղիկների գլուխները կախվել էին փախչող ալիքների վրա և քամուց օրորվում էին: Խռնվող մազերն ու երևացող մի կտոր կապույտ շրջազգեստը երբեմն ծածկում էին ծաղիկները:

Նավն ուժեղ սուլեց...

Գլուխն անհետացավ: Նրա հետ միասին անհետացան նաև շրջազգեստն ու ծաղիկները: Մարդիկ խառնվեցին իրար: Ես զարմացած նայեցի շուրջս: Գիրք կարդացող պառավն ակնոցն ուղղեց ու անտարբերությամբ ծամծմեց.

– Վոլգա-Դոն ջրանցքին ենք մոտենում:

Շտապեցի նավի առաջամասը...

Հսկայական երկաթե դարպասից ներս մտավ նավը. ասես մի փոքրիկ խաղալիք ընկավ ավազանի մեջ: Հետո դռները ճռնչալով փակվեցին: Նավը ջրի հետ բարձրացավ, բարձրացավ և արդեն սուզված դարպասի վրայով շարժվեց առաջ...

Երևաց ծաղկեփունջը: Ուշադրություն չդարձրեցի. ծաղիկներ շատ էի տեսել...

Երբ նավը հեռացավ, ավազանում թպրտացող էլեկտրական լույսերը խառնվեցին իրար. ծառս եղան, բախվեցին գրանիտե պատերին ու փշրվելով հանգստացան, հանգստացան, դարձան նավից փախչող դեղնաբծեր:

Քամին ուժեղացավ: Շատերը կամաց-կամաց թողեցին տախտակամածը:

Կողքիս կանգնած տղաներից մեկը մոտեցավ աղջկան:

– Դո՞ւք եք սիրուն, թե՞ ծաղիկները:

Աղջիկը նայեց ձեռքի ծաղկեփնջին ու չժպտաց.

– Նայած թե ո՞վ է համեմատողը:

Տղան մտքերը հավաքեց.

– Դուք ավելի գեղեցիկ եք:

– Ուրեմն ծաղիկներին լավ չեք նայել,– մեջ ընկա ես:

Աղջիկը գլուխն առաջ ձգեց, որ ինձ տեսնելու հնարավորություն ունենա:

Ես անտարբեր նայեցի ջրի վրա երևացող կանաչ լուսարձակին:

– Բարձրանանք վերև,– շշնջաց տղան,– նավախելից ամեն ինչ այնքան լավ է երևում:

– Այստեղից երևացածն էլ բավական է,– պատասխանեց աղջիկը:

Երկարավիզ շեկլիկը գլուխը նորից երկարեց...

Պատասխանի փոխարեն, աղջիկը սկսեց ինչ-որ եղանակ մռմռալ:

Երկարավիզը համառեց: Աղջիկը նույն անտարբերությամբ շարունակեց երգել...

– Ջրի մեջ դնեիք... – աղջկա հայացքը որոնելով շարունակեց շեկլիկը,– ձեռքերիդ մեջ կթառամեն ծաղիկները:

– Ծաղիկների թառամելը ոչինչ, թառամած մարդկանց ուշադրությունը դեպի «ծաղիկները», այդ է զարմանալի...

Երևի կրակոցն ուժեղ էր, որ շեկլիկը ցավատանջվեց. դեմքին կնճիռները շատացան և, որպես տարիք առած մարդու դրոշմ, մնացին նրա աչքերի անկյուններում, ճակատին, բերանի երկու կողմերում:

Աղջիկը շարունակեց նույն եղանակը... Իսկ նա այդպես էլ պապանձվեց: Երկար ժամանակ քարացավ տեղում և, վերջապես, հեռացավ պարտված:

Ինձ մոտ կանգնած զույգն էլ հեռացավ՝ երևի նավի մյուս կողմը: Ակնոցավոր մարդը շատ երկար կանգնեց... Բայց վերջապես նա էլ...

Նավի առաջամասում երկուսս էինք: Հենվել էինք բազրիքին: Աղջիկն այլևս չէր երգում: Լռությունը խախտում էր լայնահուն Վոլգան, որ բախվելով նավին՝ աղմկում էր, քամու հետ միանալով՝ սուլում:

Տախտակամածի վրա լսվող ոտնաձայնը մոտեցավ, անցավ մեզանից, հետո ետ դարձավ ու ցցվեց երկուսիս արանքում:

Նավի աշխատող տղան սկզբում ինձ նայեց, հետո՝ աղջկան:

– Չե՞ք մրսում:

– Ո՛չ,– չոր պատասխանեց աղջիկը:

Տղան սահելով մոտեցավ:

Աղջիկը հեռու քաշվեց ու սկսեց քիչ առաջվա ծանոթ եղանակը:

Տղան ինչ-որ բան հարցրեց, հետո՝ սպասեց...

Աղջիկը, խոնավ մազերը ետ տանելով, կռացավ դեպի գետը. ասես երգն էր հարմարեցնում ջրի նվագին:

Քամին այնքան սաստկացավ, որ աչքերս արցունքոտվեցին:

Տղան աչքերը տրորեց, տրորեց ու հեռացավ:

Հեռվից, շատ հեռվից, լուսատտիկների նման փայլփլեց մի բլուր. երևի քաղաք էր:

– Ժամացույց ունե՞ք,– քամու սուլոցի մեջ լսվեց աղջկա ձայնը:

– Ունեմ, մեկն անց է...

– Ուշ է,– ասաց աղջիկն ու չշարժվեց տեղից:

– Նայած ո՞ւմ համար...

– Քնել հարկավոր չէ:

– Քնողները հիմա ինչո՞վ են շահում:

– Դուք ինչո՞վ եք շահում:

– Ես եթե քնած լինեի, չէի տեսնի այն կայծկլտացող սարալանջը, չէի զգա, որ Վոլգայի վրա այսպիսի ուժեղ քամի է լինում, որ այդ քամու դիմաց կարող է կանգնել մի աղջիկ, այն էլ՝ թևերն ու ուսերը բաց...

– Իսկ ես հաճախ եմ անցնում այս ճանապարհով,– մթության մեջ նկատեցի աղջկա ժպիտը:

– Գուցե հետաքրքրություն չլինի... Իսկ ինչո՞ւ չեք գնում քնելու:

– Չորս ժամից հետո իջնելու եմ... Բայց ճիշտ եք ասում, կարելի է մի քիչ հանգստանալ: Իսկ Դուք չե՞ք քնելու:

– Երևի ոչ:

– Ցուրտ է, թե չէ կարելի է լուսացնել: Բարի գիշեր: Ավելի ճիշտ՝ մնաք բարով:

– Ես կգամ ճանապարհելու:

– Եթե արթնանաք այդ ժամին:

– Կարթնանամ:

– Այդ դեպքում՝ մնաք բարով չեմ ասի...

Որքան նավը մոտենում էր լուսե բլուրին, այնքան քամին կատաղում էր ու ահեղամռունչ ալիքների գագաթները թռցնելով՝ ծեփում նավակողերին, փակ պատուհաններին, վերև բարձրանալով՝ միայն կաթիլներ էր շպրտում շորերիս վրա, երեսիս, աչքերիս մեջ:

Դող անցավ մարմնովս: Ներս մտա սենյակ:

Ընկա անկողնու վրա. «Եթե հանկարծ քնեմ ու...»:

Փորձեցի բղավել. հայերեն հին ճմռթված լրագիր ընկավ ձեռքս:

* * *

Նա ինձ տեսավ միջանցքում և այնպես ժպտաց, որ ջերմություն անցավ մարմնովս...

– Այդպես էլ չքնեցի՞ք:

– Ո՛չ:

– Ինձանից հետո կատաղե՞ց Վոլգան:

– Սարսափելի:

– Ես էլի եկա, Դուք այնպես մտախոհ էիք նայում հեռուները, որ չցանկացա խանգարել:

– Իզուր...

Նավը մոտենում էր Վոլգոգրադին:

– Չորս ժամ կանգնում է այստեղ,– միջանցքի պատուհանին ավելի մոտեցավ աղջիկը:

* * *

Հյուրանոցում մի կերպ տեղավորվելուց հետո Ալլան ինձ տարավ զարմանահրաշ մի վայր, ուր ամեն կողմ արձաններ, արձաններ ու ամեն կողմ՝ պատերազմ, պատերազմ...

Ալլայի ձեռքին մի ծաղիկ մնաց... մնացածը դրեցինք «Մամաև Կուրգան» բլուրում՝ մի հուշարձանի ոտքերի տակ...

Նավահանգստում «Վիշեր»-ը չկար: Ես խառնվեցի իրար, իսկ Ալլան ծիծաղեց.

– Մնացիր:

Քայլեցինք գետափով, բայց ոչ առաջվա նման ձեռք ձեռքի տված: Նրա ծիծաղկուն այտերն ինձ աստիճանաբար տխրություն էին ներարկում:

– Կգնաս, ինչո՞ւ ես շտապում, վախենում ես չհասնե՞ս ընկերներիդ:

Մի պահ ինձ թվաց, որ այդ գեղեցիկ աղջկան պատրաստ եմ արդեն վիրավորել: Բայց ոչ... Նա հաճախ էր ինձ նայում ժպիտով ու հաճախ էլ խոսում, կատակում, ծիծաղում:

– Այս երևացողն էլ նավահանգիստն է, գնանք տոմս վերցնենք վաղվա համար, որ շատ չուշանաս:

Գուցե ինձ զսպվածությունից դուրս բերելու համար էր այդպես հանգիստ, այդպես սիրալիր խոսում նա: Իսկ ես դեռ շարունակում էի համբերել՝ զարմանալու չափ:

Սանդուղքներից իջանք ու քայլեցինք տախտակների վրայով: Նա ձեռքիցս քաշեց... Դիմացի նավի երկրորդ հարկում ծանոթ դեմքեր երևացին: Չհավատացի աչքերիս: Կարդացի նավի վրա. «Վիշեր»... Այդ էլ պատրանք թվաց: Բայց ոչ, երկրորդ հարկում ծանոթ դեմքերը շատացան... Ուրախացած նայեցի Ալլային...

Ճիշտ այդ ժամանակ էլ նավի երկու աշխատող սկսեցին վերև քաշել տախտակ-սանդուղքները:

Հապշտապ անցա շարժվող տախտակների վրայով ու թռա ներս:

Ալլան ծիծաղեց ու ձեռքով արեց:

Պարաններ քանդող մարդիկ ինձ ետ հրեցին: Վազելով բարձրացա երկրորդ հարկ... Նավն արդեն շարժվում էր:

– Ձեր հասցե՞ն,– գոռացի շնչակտուր:

– Մի տեղ գրեք,– ժպտաց նա:

Նայեցի, մոտս թուղթ չկար:

– Ասեք, կհիշեմ,– չհամբերեցի այլևս:

Նա երկու-երեք քայլ առաջ եկավ ու հատ-հատ հաղորդեց հասցեն... Փողոցի անունը խառնվեց կողքիս կանգնող երեխայի ճիչին ու արագ ցնդեց: Կրկնել տալն արդեն ուշ էր, գոնե բաժանումը կարգին լիներ. ձեռքս թափահարեցի, ժպտացի: Նա հնարավորին չափ առաջ եկավ ու ձեռքի միակ ծաղիկը նետեց դեպի նավը: Օդի մեջ մի քանի պտույտ գործելով՝ բավական ճանապարհ անցավ, հետո գլխիվայր ընկավ գետը:

Նավն անտարբեր հեռացավ, հեռացավ, մինչև որ կարմիր ծաղիկը գունափոխվեց, փոքրացավ ու դարձավ մի կտոր կապույտ ջրի կաթիլ:

Կարապետ ՀՈՎՍԵՓՅԱՆ - 100

ԳԻՇԵՐԵՐԳ

Ուշ երեկոյին կուզեմ միայնակ
Քայլել առվակի ծանոթ եզրերով,
Նստել ծաղկազարդ խնձորենու տակ
Ու տարվել քնքուշ իմ երազներով:

Իմ դեմ կբացվի երկինքը անհուն՝
Փռած վառվռուն գորգը աստղերի:
Կաթնագույն ծովում լուսինը անքուն
Կլողա ինչպես լուսաշող փերի:

Ուզում եմ բռնել, համբուրել անհագ
Խավարում լուսնի շողիկը քնքուշ,
Որը փայլում է առվի մեջ բարակ,
Մթին թփերում կարկաչում անուշ:

Ուզում եմ սուզվել հեզանազ արտում,
Ծնչել խոտերի նրբահոս բույրը,
Որ հովն էլ շնկա գիշերվա մթնում
Ու շուրթերիս տա իր զով համբույրը:

Գիշերն եմ սիրում, ցերեկվա նման
Իր խլրտումով, հույզերով անմար.
Թեպետ քնած է թվում ամեն բան,
Բայց մշտարթուն է բնությունը մայր:

ԳԱՐՆԱՆ ԵՐԿԻՆՔԸ

Գարնան երկինքը երբեմն անփայլ,
Ծալ-ծալ կուտակված ամպերով մթին,
Ներքև է կախվում հայացքով մռայլ
Ու արտասվելով գլորվում գետին:

Մութ ամպերի մեջ շանթերը դեղին,
Նման հրեղեն բարակ օձերի,
Բեկվող գծերով շողում են ուժգին
Ու դղրդում է որոտն ամեհի:

Մեկ էլ ամպամած երկինքը անհուն,
Քմահաճ ու խենթ գեղուհու նման,
Խնդում է պայծառ ցոլքերով գույն-գույն,
Բացվում է կապույտ ժպիտով անձայն:

Այդպես էլ ահա իմ սիրտը ջահել,
Խինդի ու ցավի խաղով անսովոր,
Մերթ մթագնում, պայթում է ահեղ,
Մերթ հուսադրվում, ժպտում է անդորր:

* * *

Երգիս պսակը քո շուրջն հյուսեցի,
Սիրտս գորգի պես գցի ոտքիդ տակ,
Բայց դու նայեցիր լոկ հարևանցի,
Սառն ու անտարբեր հեռացար մենակ:

Ցնդել են օդում հույզերս ոսկի,
Երազներս ջինջ կորել են անհետ,
Ակունքն է քամվել իմ զվարթ խոսքի,
Չկա հետադարձ ոչ մի արահետ:

Ու գիտեմ, պիտի ցավով այս մաշող,
Վերքս դեռ մխա, սիրտս մոխրանա,
Ու այնուհետև սիրուց իմ անշող
Միայն այդ մի բուռ մոխիրը մնա:

ԴԻՆՈ ԲՈՒՑԱՏԻ

ԹՂԹԵ ԳՆԴԻԿԸ

Գիշերվա ժամը երկուսն էր, երբ Ֆրանչեսկոն ու ես պատահմամբ (բայց իսկապե՞ս պատահմունք էր) անցանք Կալցավարա փողոցի համար 37 շենքի մոտով, ուր ապրում է բանաստեղծը: Որքա՜ն արդար ու խորհրդանշական է, որ հանրահայտ բանաստեղծը բնակվում է մեծ շենքի վերջին, բավական անհրապույր այդ հարկում: Ներքևում կանգնած, երկուսս էլ, առանց մի բառ ասելու, նայեցինք վեր հուսալով: Շենքի ճակատամասը թաղված էր մթության մեջ, բայց վերևում, այնտեղ, ուր վերջին քիվն անհետանում է երկնքի մշուշների մեջ, մի պատուհան (միայն դա) թույլ լույս էր արձակում: Մնացյալի հետ համեմատած, մարդկության հետ համեմատած, որ քնած էր գազանի քնով, որպես խուփ, գծուծ ու կույր պատուհանների սև շարքի հակոտնյա, որքա՜ն հաղթականորեն էր լուսավորում այն:

Հնամաշ ռոմանտիկա էր գուցե, բայց մեզ սփոփեց այն միտքը, թե մինչ մյուսները ընկղմված էին խոր քնի մեջ, այնտեղ՝ վերևում, մի մենակյաց լամպի լույսի տակ նա բանաստեղծություններ էր հորինում: Իսկապես տարաժամ էր, գիշերվա ամենահեռու անկյունը, երբ երազներն են ծնվում, և հոգին, եթե կարող է, ազատագրվում է կուտակված ցավերից՝ սավառնելով կտուրների վրայով ու աշխարհի մշուշների միջով, փնտրելով խորհրդավոր այն բառերը, որ վաղը, վերին շնորհով խոցելու են մարդկանց սրտերը՝ նրանց դրդելով մտածելու վեհ բաների մասին: Իսկապես, դժվար կլիներ պատկերացնելը, որ բանաստեղծներն աշխատեին, ենթադրենք, առավոտյան ժամը տասին, երբ հենց նոր են սափրվել, մի առատ նախաճաշից հետո:

Մինչ դեմքերս այդպես վեր էինք պարզել, ու գլխներովս խառնիխուռն մտքեր էին անցնում, ինչոր բան ստվերի պես հանկարծ շարժվեց լուսավորված պատուհանի շրջանակի մեջ և դանդաղ անկումով գահավիժեց մեզ վրա: Նախքան գետնին հասնելը ամենամոտ լամպարի լույսի մեջ երևաց, որ դա թղթե գնդիկ էր: Ընկավ մայթի վրա: Մեզ հասցեագրված ուղերձ էր կամ հավանաբար կանչ՝ ուղղված անծանոթ անցորդին, ով առաջինը գտներ այն, ինչպես անում են անմարդաբնակ կղզում նավաբեկվածները՝ շշի մեջ փակելով այն ու հանձնելով օվկիանոսի ալիքների ողորմածությանը: Սա էր առաջին միտքը, որ ծագեց մեր գլխում: Կամ էլ բանաստեղծը վատ էր զգում, ու քանի որ տանը ոչ ոք չկար, օգնության էր կանչում: Եվ կամ գուցե գողե՞ր էին մտել իր սենյակը, ու այդ թղթի կտորը հայտնում էր այդ մասին:

Ֆրանչեսկոն ու ես միասին կռացանք՝ թղթե այդ գնդիկը վերցնելու: Ես ավելի ճարպիկ գտնվեցի:

- Այդ ի՞նչ է,- հարցրեց ընկերս:

Լամպարի լույսի տակ ես արդեն բացում էի այն: Դա ճմռթած թուղթ չէր: Օգնության կանչ չէր: Իրականությունն ավելի պարզ ու ճապաղ էր կամ ավելի հանելուկային: Ձեռքումս հայտնաբերեցի թղթի կտորների մի կույտ, որի վրա նշմարեցի բառերի ծվեններ: Ակնհայտորեն, բանաստեղծը գրելուց հետո հիասթափվել էր կամ կատաղությամբ էր համակվել, թուղթը պատառոտել էր հարյուր կտորների, դրանցից մի գնդիկ էր սարքել ու շպրտել պատուհանից դուրս:

- Դեն մի՛ նետիր,- ասաց Ֆրանչեսկոն,- գուցե դա մի շատ գեղեցիկ բանաստեղծություն է: Մի քիչ համբերություն դրսևորելով՝ կարող ենք կտորները իրար կպցնել:

- Եթե գեղեցիկ բան լիներ, դեն չէր նետի, հանգի՛ստ եղիր: Եթե դեն է նետել, նշանակում է զղջացել է, նշանակում է՝ նրան դուր չի եկել, ու դա ինքը չի ընդունում որպես իրենը:

- Երևում է, դու նրան չես ճանաչում: Նրա ամենահայտնի տողերը փրկել են իր ընկերները: Մինչդեռ ինքն ուզեցել է ոչնչացնել դրանք: Նա դժվարահաճ է:

- Եվ հետո,- ասացի,- ծեր է արդեն, որոշակի տարիքից հետո բանաստեղծություններ այլևս չեն գրում:

- Չէ՛, գրում է, միայն թե չի տպագրում դրանք, քանզի երբևէ գոհ չի լինում իր գրածներից:

- Լա՛վ: Իսկ եթե բանաստեղծության փոխարեն,- ասացի ես,- լոկ հասարակ նշո՞ւմ է, ընկերոջն ուղղված նամա՞կ, կամ էլ պարզապես ծախսերի ցուցակագրո՞ւմ:

- Էս ժամի՞ն:

- Հա՛, էս ժամին: Բանաստեղծները, կարծում եմ, հաշիվներ են կազմում գիշերվա երկուսին:

Այդժամ ես նորից կոլոլեցի թղթի ծվեններն ու դրեցի բաճկոնիս գրպանը: Ի հեծուկս Ֆրանչեսկոյի բողոքների՝ այդ դրվագներն այլևս չառանձնացրի, չփռեցի սեղանի վրա, չփորձեցի վերակազմել թուղթն ու կարդալ, թե ինչ էր գրված այնտեղ: Թղթե գնդիկը, համարյա այն նույն վիճակում, ինչ վիճակում վերցրել էի գետնից, փակեցի մի արկղում, որ մինչև հիմա մնում է այնտեղ:

Բացառված չէր, որ ընկերս իրավացի լիներ, և մեծ բանաստեղծը իսկապես զղջացած լիներ իր գրածի համար և կատարելության իր այդ մոլեգնության պատճառով ոչնչացրած լիներ տողեր, որոնք այլ դեպքում դառնալու էին

անմահ: Կարող է պատահել, որ նրա գրած բառերն այդ գիշեր կազմեին աստվածային մի ներդաշնակություն, լինեին ամենահզոր ու ամենամաքուր բանը, որ երբևէ ստեղծվել է աշխարհում: Բայց պիտի հաշվի առնել այլ վարկածներ ևս. կարող է այն լիներ անկարևոր թղթի մի կտոր, որ, ինչ ես քիչ առաջ էի ասում, տնային գործերի մասին մի ծապաղ նշագրություն լիներ ընդամենը. կամ թե, գուցե բանաստեղծը չէր գրել դա ու նետել դուրս, այլ նրան հարազատ կամ նրա մոտ ծառայող ինչ-որ մեկը, կամ գուցե իսկապե՞ս դա բանաստեղծություն էր, բայց անհաջող մի բանաստեղծություն, կամ էլ ուղղակի չի կարելի բացառել, որ մենք սխալվել էինք, որ լուսավոր այն պատուհանը բանաստեղծինը չէր, այլ պատկանում էր մեկ այլ բնակարանի, ու այդժամ այդ ձեռագրի պատառիկը այլ բան չի լինի, քան ճմռթված մի թուղթ ընդամենը: Բայց և այնպես, այդ հակասական ենթադրությունները չեն, որ ինձ ետ են պահում թուղթը վերականգնելուց: Հակառակը: Գտածոյի գիշերային հանգամանքները, գուցե անտեղի համոզմունքն առ այն, թե առեղծվածային ինչ-որ խզբզոց պարունակում է (ավելի հաճախ, քան մենք ենք կարծում) կյանքի այնպիսի փաստեր, որոնք արտաքնապես թվում են, թե կախված են կոյր պատահականությունից, և այն միտքը, թե նախախնամությունն էր, ամենագետ ճակատագիրը, որ հենց մեզ՝ ինձ ու Ֆրանչեսկոյին էր դրել այդ վայրում, հենց այդ գիշեր, հենց այդ ժամին, որպեսզի կարողանայինք վերցնել մի գանձ, որն այլ դեպքում պիտի կորչեր: Այդ ամենը՝ անբանականի վրա հիմնված փաստարկների հանդեպ իմ հակումով, ինձ համոզեց, որ թղթե գնդիկը պարունակում է մի ահռելի գաղտնիք. գերմարդկային գեղեցկություն ունեցող մի բանաստեղծություն, նկատի ունեմ, որ բանաստեղծը ոչնչացրել էր այն դառն համոզմունքից, թե չի կարողանալու այլևս երբեք հասնել այդպիսի բարձրության (իսկապես, արվեստագետն իր կորագծի գագաթին հասնելուց հետո ճակատագրայնորեն գահավիժում է ցած և ստիպված է այլևս ատել այն ամենը, ինչ արել է դրանից առաջ, և ինչը նրան անընդհատ հիշեցնում է ընդմիշտ կորսված մի երջանկության մասին):

Նման համոզվածությամբ՝ ես նախընտրում եմ թանկարժեք անակնկալը պահպանել այնպիսին, ինչպիսին կա, և թաքուն պահել մի անորոշ ապագայի համար: Ու ինչպես որ կյանքում որևէ լավ բանի սպասումը անպայմանորեն մեզ տալիս է ավելի շատ ուրախություն, քան թե այն ունենալու իրողությունը (և իմաստուն բան է անմիջապես չօգտվել այդ լավ բանից, այլ ընտրել ցանկության այն հիանալի տեսակը, որ բավարարված լինելու, բայց ոչ դեռևս իրականում բավարարություն ստանալու անխախտ ցանկությունն է, մի խոսքով՝ սպասումը, որն այլևս երկյուղներ ու կասկածներ չունի, հավանաբար մարդուն շնորհված երջանկության միակ ձևն է, ինչպես որ գարունը, որը խոստում է և ուրախացնում է մարդկանց ավելի շատ, քան ամառը, քանզի վերջինս իրականացումն է այն բանի, ինչը տենչում էինք), այդպես էլ անհայտ բանաստեղծության հմայքը այն երևակայությամբ կանխավ ապրելն է, ինչը հավասար է և անգամ գերազանցում է ուղղակի և խորին իմացության գեղարվեստական հաճույքին: Պիտի ասեն սակայն, թե դա երևակայության չափազանց անբռնազբոս խաղ է, թե այդպես դուռ է բացվում խորհրդապաշտության ու փչոցների համար: Բայց եթե նայենք ետ, պիտի հավաստենք, որ ամենաերանելի ու մեծ ուրախությունները երբևէ չեն ունեցել ավելի հաստատուն կառույց:

Ասենք, չլինի՞ այստեղ բանաստեղծության առեղծվածի հետ գործ ունենք՝ արտահայտված իր ծայրահեղ օրինակներից մեկի մեջ: Իսկապես, հնարավոր է, որ այն կարիք չունենա գործածելու բաց և ընդհանուրի համար հասկանալի մի լեզու, ոչ էլ ունենա տրամաբանական իմաստ, ոչ էլ իր բառերը կազմեն կապակցված նախադասություններ կամ արտահայտեն ողջամիտ հայեցակարգեր: Նաև բառերը, ինչպես այս դեպքում, կարող են բաժանվել կտորների և աղոտ կերպով միախառնվեն վանկերի մեքենայության մեջ: Ավելին. դրա կախարդանքը վայելելու, դրա թափը զգալու համար ավելորդ է դրանք կարդալը: Բավական է նայել դրանց, բավական է դրանց հետ շփում-կապը, ֆիզիկական հարևանությունը:

Գուցե և այդպես է: Կարևորը մանավանդ հավատալն է, որ այդ գրքույկի մեջ, այդ էջում, այդ տողերում, այդ նշանների մեջ գլուխգործոց է (տե՛ս Լեոպարդիի Զիբալդոն. «Մեծ մասամբ, գեղեցիկը գեղեցիկ է, քանզի այդպիսին է իրեն համարում): Ես, օրինակի համար, երբ բացում եմ դարակս ու ձեռքիս մեջ սեղմում թղթե այդ գնդիկը, ուր՝ պատառիկների այդ թնջուկում, ենթադրաբար թաքնված է բանաստեղծության մի ուրվագիծ, գուցե ներշնչանքի ուժով, բայց հրաշալիորեն ինձ ավելի բավարարված եմ զգում, ավելի կայտառ, ավելի թեթև, նշմարում եմ հոգևոր մեծության լույսը, և ծայրագույն հորիզոնից դանդաղորեն դեպի ինձ են առաջանում լեռները, մենակյաց լեռները:

(Իսկ գուցե դրա մեջ այլ բան չկա, քան անանուն մի նամակի սևագիր՝ որևէ գործընկերոջ բախտին քար գցելու համար):

Իտալերենից թարգմանեց
Գառնիկ ՄԵԼՔՈՆՅԱՆԸ

ՄՈՒՀԱՄՄԵԴ ԹԵՅՄՈՒՐ

ԳՆԱՑՔՈՒՄ

Առավոտն իր ձյունաձերմակ ճակատով ցրում է խավարը տխուր սրտից՝ վերադարձնելով ծերունուն իր երիտասարդությունը, ու մեղմիկ զեփյուռն է շողում սրտերում՝ թաքցնելով հոգսերը: Այգում ծառերն են աջ ու ձախ օրորվում, կարծես պարում են ի սեր այգաբացի: Մարդիկ շտապում են փողոցում՝ միախառնվելով աշխատանքային եռուզեռին, իսկ ես ընկճված նայում եմ պատուհանից՝ բնության գեղեցկությանը և հարցնում ինքս ինձ նրա ընկճախտի գաղտնիքի մասին, որ չի առաջնորդվում ոչնչով:

Վերցրի Մովսեսի հատորը, փորձեցի ընթերցել, չստացվեց, գցեցի նստարանին ու նստեցի տեղում՝ ընկնելով մտքերի մեջ՝ դառնալով զոհը ժամանակի ճիրաններում: Մի պահ դադարեցի մտածել, ապա վեր կացա միանգամից, վերցրի ձեռնափայտս ու դուրս եկա տանից. սլացա՝ չիմանալով՝ ուր են տանում մտքերս, մինչև հասա կայարանի երկաթյա դռան մոտ: Մտազբաղ կանգնեցի, ապա հանգստության համար որոշեցի ճամփորդել: Գնեցի մի տոմս՝ երրորդ դասի, նստեցի գնացք՝ անցկացնելու նրանում ամբողջ օրս:

Նստեցի գնացքի վագոններից մեկում՝ պատուհանի մոտ, ու չկար ոչ ոք ինձանից բացի, մի քիչ էլ մնացի մենակ, մինչ ականջիս տակ խշշացող մի ձայն լսվեց. լրագիրներ վաճառողի ձայնն էր. «Վադի ան-Նիլ, ալ-Ահռամ, ալ-Մաքտամ»: Գնեցի մեկը, սկսեցի ընթերցել: Հանկարծ բացվեց դուռը, ու մտավ մի ծերունի՝ սևազգեստ, բարձրահասակ, բավականին նիհար, սևամորուս: Կոպերը ծուլությունից կախվել էին՝ փակելով աչքերը, կարծես նոր արթնացած լիներ: Պարոնը, որ դասախոս էր, նստեց ինձանից ոչ այնքան հեռու, հանեց կարմիր վերարկուն՝ մինչ նստարանին տեղավորվելը: Այնուհետև հատակին դրված պայուսակից հանեց կարմիր թաշկինակը, որ ավելի շուտ երեխայի ծածկոցի էր նման, ու սրբեց շուրթերը: Ապա գրպանից հանեց համրիչը, որ հարյուրի հասնող հուլունքներով էր պատված, սկսեց պտտել՝ կրկնելով Մուհամմեդ մարգարեի, սուրբ առաքյալների անունները: Երբ աչքերս վեր հանեցի, տեսա պատանու, ում մուտքը սենյակ չէի էլ նկատել՝ պարոնին ուշադիր զննելու պատճառով: Պատանին, որ ներս էր մտել, հավանաբար ուսանող էր, որ ցանկանում էր տոնական օրերն անցկացնել հարազատների ու բարեկամների հետ: Ես նրան էի նայում, նա՝ ինձ: Ապա վերցրի պատմվածքներից մեկը, սկսեցի ընթերցել՝ մինչ գնացքը կշարժվեր, չորրորդ ճամփորդը մտավ սենյակ: Գեղեցիկ հագնված մի էֆենդի հաստատուն քայլերով մտավ սենյակ՝ կրկնելով բառեր, որ միշտ լսել եմ մրգավաճառներից: Նստեց, ժպտաց յուրաքանչյուրին, մինչ կարտասաներ իր սալամը հետաքրքիր կերպով: Լռություն էր սենյակում, պատանին պատմվածք էր կարդում, դասախոսը լռում էր, կարծես բացակայում էր, էֆենդին հետաքննող հայացքով զննում էր իր հետ ուղևորվածների հագուստները, իսկ ես Վադի ան-Նիլ էր կարդում՝ մերթընդմերթ հետևելով գնացքի ընթացքին, մինչ հինգերորդը կմտներ:

Բոլորս լռում էինք, կարծես սպասում էինք հաջորդի ժամանելուն: Ու հանկարծ մտավ տղամարդ՝ մոտ վաթսուն տարեկան՝ կարմիր դեմքով, ազնվական, վեհ աչքերով: Մաշկի գույնը վկայում էր, որ չերքեզ է արմատներով: Ձեռքում պահել էր անձրևանոցը, որի հետ էր անցկացրել ժամերը՝ ուտելով ու խմելով: Ինչ վերաբերում էր վերարկուին, ապա օձիքը հասնում էր մինչև ականջները: Նստեց իմ դիմաց՝ ուշադիր նայելով ուղևորների դեմքերին՝ ցանկանալով ճշտել՝ ուր են ուղևորվում: Ապա խորքից լսվեց մի ձայն, որ հայտնեց գնացքի ընթանալու մասին՝ դեպի այն կայարան, ուր ուղևորվում էինք մենք՝ ճամփորդներս:

Բոլորս լուռ նստած էինք՝ գլուխներումս ծտեր, գնացքն ընթանում էր, մինչ հասավ Շուբրայի կայարան, ապա չերքեզը, սևեռելով հայացքն ինձ, հարցրեց.

- Հետաքրքիր նորություն կա՞, էֆենդի՛:

Ձեռքից խլելով թերթս՝ ասացի նրան.

- Ոչ մի հետաքրքրիր բան. միայն այն, որ Կրթության նախարարությունը քայլեր է ձեռնարկում տգիտության դեմ:

Չցանկանալով լսել խոսքիս ավարտը՝ խլեց թերթս ու սկսեց կարդալ՝ անգամ չստանալով իմ թույլտվությունը: Կարդում էր՝ ինչ պատահում էր, միայն թե խուսափի դեմքիս նայելուց. դեհ ես իմանալով չերքեզների խիստ բնավորության մասին՝ չփորձեցի խանգարել: Հանկարծ կանգնեց գնացքը, ու սենյակ մտավ Քալուբի քաղաքապետը՝ բարձրահասակ, արծվաքթով:

Դեմքի վրա երևում էին ջրծաղկի թողած հետքերը՝ ամփոփվելով նրանցում ուժն ու անհանդուրժողականությունը: Նստեց կողքիս, նախ կարդաց ալ-Ֆաթիհան, ապա շարժվեց գնացքը:

Չերքեզը մի քիչ էլ կարդաց թերթը, ապա գցեց հատակին ու վառեց այն՝ ասելով.

- Նրանք ուզում են վերացնել տգիտությունը, որ հողագործը բարձրանա իր դիրքով՝ հավասարվելով տիրոջը: Նրանք ծանր հանցագործություն են գործում:

- Ի՞նչ հանցագործություն,- ասաց էֆենդին:

- Հարցն այլ է,- ասաց չերքեզը:

- Ու ինչո՞ւմն է,- մռայլվեց էֆենդին:

- Դաստիարակել հողագործին, ստրուկին. այս է հարցը:

Այնպես բղավեց, որ նույնիսկ արթնացրեց քնից դասախոսին:

- Հողագործը օրոցքից է դաստիարակվում՝ լինել տգետ ու պատկանել վերի դասին, ծառայել իր տիրոջը:

Չհասցրեց ավարտել, երբ էֆենդին, Աստված պահապան, կտրեց խոսքը՝ քմծիծաղելով: Ու ժպիտ հայտնվեց նրա դեղնամորթ դեմքին:

- Դու ճիշտ ես, բե՛յ, այո՛, ճիշտ ես: Այլ կերպ կմտածեիր, եթե դու էլ ապրեիր գյուղում, քանզի մենք էլ ենք տառապում մեր հողագործների հետ:

- Գյուղո՞ւմ եք ապրում,- մռայլ հայացքը սևեռելով նրան՝ հարցրեց չերքեզը:

- Ծնվել եմ այնտեղ, բե՛յ:

Խոսակցությունն ընթանում էր այն ժամանակ, երբ քնած էր դասախոսը: Էֆենդին, որ փայլում էր հագուկապով, նայում էր դասախոսին, զննում հագուստը ու ժպտում: Ինչ վերաբերում էր պատանուն, նրա հայացքը նողկանք էր արտահայտում, ցանկանում էր խոսել, սակայն լռում էր, քանի որ տարիքը թույլ չէր տալիս պատասխանել: Մինչ ես խոսեցի:

- Հողագործն էլ մեզ նման մարդ է, հարգելի՛ս, ինչպես հազարները մեր երկրում: Նրանց էլ հարկավոր է վերաբերվել այնպես, ինչպես մեզ են վերաբերվում: Քաղաքապետը նայեց ինձ, կարծես նրա սրտով էին խոսքերս:

- Ի՞նչ կանեիք, եթե հողագործը չդադարի աշխատել, պատասխանե՛ք, էֆենդի՛:

- Իհարկե առանց ծեծի չի կարելի,- սրիկայի նման ժպտաց էֆենդին,- ասում եմ քեզ՝ իբրև այս գործի իսկական վարպետ:

Ուսանողը չհամբերեց:

- Հարգելի՛ էֆենդի, ի՞նչ եք արել հողագործի համար, բացի ծեծից: Եթե միայն նրան լավ վերաբերվեիք, գուցե նրա մեջ կգտնեիք լավ մարդու, այլ ոչ թե գործիքի:

- Այ սա է դաստիարակությունը,- հաստատեց քաղաքապետը:

Դասախոսն արթնացավ: Հարցն ուղղվեց նրան:

- Դաստիարակե՞լ, թե՞ կրթել:

Մի՛ դարձրեք երեխաներին տգետ: Այն պահից, երբ նրանք ձեռք բերեն անորակ ու սին գիտելիք, կդադարեն լինել կիրթ՝ հոգով ու մտքով, ու կկորչի բարոյականությունը, կմոռանաք Աստծու պատվիրանները, կմեծամտանաք ու կժխտեք մեր Տիրոջ գոյությունը:

- Ու խոսեց գիտությունը, Փա՜ռք Բարձրյալին:

Գոռում էր էֆենդին, գոչում՝ չերքեզը, լռում էի ես, նողկում՝ ուսանողը:

Կանգ առավ գնացքը, դադարեց ընթացքը, դուրս եկա գնացքից՝ քայլելով դեպի գյուղ. միայն թե ականջներումս էին ծանր խոսակցության արձագանքները:

Արաբերենից թարգմանեց
լեզվաբան-անթրոպոլոգ
Դիանա ՊԵՏՐՈՍՅԱՆԸ

Մարիամ Ալամազյան
«Լուրեր ծակատից (Ծեր կնոջ դիմանկար)»

ՆՈՐ ԱՐԵՇԻ ՎԻՊԱՍՔԸ

Մի քիչ անսովոր է մեր իրականության մեջ, որ գրքի հրատարակումից առաջ ներկայացնում ենք գրախոսությունը՝ սրանով իսկ ընթերցողին տրամադրելով գալիք հաճելի ընթերցանության:

Տարիներ առաջ՝ հայրենակիցների հետ մի հանդիպման ժամանակ, ոգևորված Նոր Արեշում բնակություն հաստատած հայրենադարձների բուռն խանդավառությամբ և արարչական ոգևորությամբ, Վեհափառ Հայրապետը գրել է. «Հուզիչ և ոգևորիչ է հերոսական պատմությունը հայրենիք վերադարձած շինարար հայի: Այդ պատմությունն սպասում է իր վիպասանին...» (գրքի բնաբանը՝ «Բացի՛ր աչքերդ, հա՛յ ժողովուրդ», խորագիրը՝ «Վազգեն Առաջին», էջ 167):

Այդ եզերքում՝ կոլորիտային անկրկնելի մի միջավայրում էր անցել և անցնում է Ալիս Հովհաննիսյանի պատանեկությունն ու ստեղծագործական անդադրում կյանքը՝ ամբարելով նորանոր տպավորություններ, հուշեր ու նաև հարաճուն պատասխանատվության անմեկնելի մի զգացում՝ արժանի լինել այդ պարզուկ ու սքանչելի, պատվախնդիր մարդկանց մասին վիպելուն, որոնց Մեծ եղեռնը զրկել էր հայրենի հողից ու հասցրել 40-ական թվականների ետպատերազմյան անբարեշեն Հայաստան, որի հեռավոր ծայրամասերում սկիզբ առավ նոր կյանքը:

Ժամանակակից հայ արձակի նշանավոր դեմքերից է Ալիս Հովհաննիսյանը, նաև ուշագրավ հրապարակախոս, բանասիրական և կինոգիտական արժեքավոր հոդվածների հեղինակ: Նրա՝ ներկայացվող «Աղաների դարը և հետոն» վեպը հավասարապես պատասխան է մեր այսօրվա տագնապախռով օրերին և յուրատեսակ հիշատակի տուրք հայրենի միջավայրին՝ Նոր Արեշի մի քանի փողոցների գեղարվեստական ասքը՝ մեծ սիրով ու կարոտով թաթավուն: Յոթ տասնամյակների կոլորիտային պատումը՝ բարի հումորով ու լույսով շաղախված, պատմում է երեք սերունդների մասին, ովքեր անմեկին սիրով փարվեցին այն հեռավոր ծայրամասային անապատին, որ առանձնացրել էին իրենց համար իբրև ավան-բնակատեղի: Նոր եզերքում հայտնված հայորդիները փորձեցին վերականգնել կամ գուցեև ստեղծել «աղայական» ու «հանրմական» «իրավունքները»՝ հավատով կամ համոզված իրենց արժանիքների մեջ: Կար ժամանակ, որ «ամեն տուն իր աղան ուներ, նույնիսկ էֆենդի էլ կար»:

Ծանր ժամանակներ էին, երկրում սով էր, ստալինյան բռնությունների հերթական բռնկումն էր՝ այս անգամ նախկին ռազմագերիների, նաև հայրենադարձների, հատկապես մտավորական խավի նկատմամբ: Այսօր՝ տասնամյակների հեռվից, առնվազն տարօրինակ է թվում ներգաղթածների նկատմամբ պահվածքը, որ առաջին օրերից պատրանաթափ արեց բոլորին. «....արդեն չեմ վրդովուիր որ կը զարմանան՝ ինչո՞ւ եկած ենք «ախպարներս», մի՞թե վատ էինք ապրում: Իսկ իրենք արդէն իսկ վատ են ապրում այստեղ, կը տեսնեմ՝ շատ վատ, բայց վա՜խը մանավանդ, թաքուն վա՜խը բոլորին մէջ»: «Շատ տարօրինակ էր ստացվում. հայրենադարձներս, դրսից եկած մեր հայացքով ավելի ճշմարիտ, ավելի հստակ էինք տեսնում ինչը ինչոց է, քան իրենք՝ այստեղի մեր սերնդակիցներից եթե ոչ բոլորը, բավական շատերը, թեպետ նրանց իսկ ծնողներն ու պապերը ամենից ավելի էին տուժել ստալինիզմից...»,- գրելու էր Կ. Սուրենյանն իր օրագրային էջերից մեկում: Ի՞նչ հեռահար նպատակ ուներ այս ամենը պատերազմից նոր դուրս եկած երկրում: Աղասի Այվազյանն իր հրաշալի ինքնակենսագրական վեպում, գուցե մի փոքր թանձրացնելով գույները, գրելու էր. «Գողերի օրենքը գործող սահմանադրություն էր, ԽՍՀՄ սահմանադրությունը՝ դատարկ թուղթ: Եվ այդ մեծ պարադոքսի հեղինակը հարբեցող կոշկակարի որդի Ստալինն էր: Հենց այդ մեծ պարադոքսի կիզակետում պայթեց «հայրենադարձության», հայոց ներգաղթի աղետը: Կազմակերպիչը ամենազոր էնկավեդեն էր՝ Վրաստանի և Ադրբեջանի էնկավեդեն, նույնիսկ Թուրքիայի մատը խառն էր հայերի միամտության աննախադեպ միստերիայում: Բեմը Հայաստանն էր, ռեժիսորը՝ Բերիան: Հայի կերպարը, որը կոտորակվել էր, բազմաթիվ զանազանակերպ դրսերևույթ էր ստացել տարբեր երկրներում, իր ամբողջ խայտաբղետությամբ հավաքվեց-լցվեց մի տեղ: Պանօպտիկում էր ներկայացնում հատկապես Երևանը: 37-ի այսահար գոյությունից ու պատերազմից հազիվ դուրս ելած Հայաստանը նոր պետք է իր մի պատառ հացը ձարեր, այդ պատառի շուրջ բերանները կրկնապատկվեցին:

Եվ պառակտվեց առանց այդ էլ անմիասնական, շփոթ հայությունը: Առաջացած «ախպար» հասկացությունը դանակի պես կիսեց ցեղը 2 մասի: ...Հոգու երկար, քրտնաչարչար աշխատանք էր հարկավոր, որպեսզի նրանցից մի մասը նմանվեր մեզ»: Կենդանի մնացած հայությունն արդեն կոփվել էր վախի, ստի, երկերեսանության, կասկածամտության, անհավատության մամլիչի ներքո: Բանաստեղծ և հրապարակախոս Հովի. Գրիգորյանը գրելու էր. «Մենք ոտից գլուխ թաղված էինք բարության, լույսի, հաջողությունների, նվաճումների, հաղթարշավների, կակաչների, վարդերի, խոխոջացող առուների, ուռաների, օվացիաների վերածվող որոտընդոստ ծափահարությունների մեջ»: Մինչդեռ սերնդի պատանեկությունն անցնում էր ծանր փորձությունների միջով, որոնց հիշատակները դեռ կրում էր հայրերի սերունդը: Ապագա գրող Հովհաննես Գրիգորյանը պատմում է, որ տան հնոտիները քրքրելիս գտել է Ստալինի ձառերից մեկի ձայնասկավառակները և հետաքրքրության համար հերթով լսել է: Մեծ է եղել զարմանքը, երբ պարզել է, որ դրանցից երկուսը ծայրից ծայր... ծափահարություններ են: Գրական անկեղծ արձագանքների հապաղման մյուս պատճառն էլ այն վերապահ վերաբերմունքն էր, որով դիմավորեցին հայրենադարձներին պաշտոնական հայրենիքը, տեղացի հայերը: Գոյացավ մի տխուր անջրպետ, որ տեսանելի է նույնիսկ այսօր: Ահա թե ինչու «երկաթե վարագույրը» փոքրիշատե տեղաշարժվելուն պես նորարեշցին գերադասեց կրկին բռնել հարցականի ուղիները: Իր հոդվածներից մեկը Աղասի Այվազյանը վերնագրեց. «Ծովից ծով Հայաստա՞ն, թե՞ օվկիանոսից օվկիանոս հայություն...»:

Վեպ-խճանկարում հայտնվում են թաղամասի մարդիկ, նրանց հետ էլ՝ ինքը հեղինակը: Չնայած այսօրինակ բազմաձայնությանը՝ նրանք հասցնում են տպավորվել՝ որոշակի միջադեպում ստանալով վիպական լիարժեք կյանքի իրավունք: Նրանք ստիպված են խնամքով թաքցնել իրենց զգացմունքները, բայց և ամեն ինչ անց են կացնում իրենց նախորդ կյանքի ու փորձառնությունների միջով:

Մի շատ կարևոր արժանավորություն էլ ունի վեպը, որի մասին մեզանում գրեթե չի խոսվել՝ հոգեբանական գիտության նորագույն ձեռքբերումների անդրադարձը: Դա եղեռնի ու անլուր հալածանքների միջով անցած սերունդների հոգեբանական խաթարումներն են և դրանց հարատևող հետևանքները, որ հաճախ անպատեհ հայտնվելով՝ թույլ չեն տալիս ապրել լիարժեք կյանքով: Առաջին սերունդն իր մեջ կրում էր նախճիրների ականատես-վկայի բարդույթը, սակայն արդեն ապացուցման կարիք չունի անակնկալ հոգեբանական էքսցեսների երևան գալը նույնիսկ հաջորդ սերունդների մեջ՝ գեների «հիշողությամբ», որ փորձում են հաղթահարել վեպի կերպարները: Նոր հազարամյակը բերեց նորանոր գոյաբանական խնդիրներ, համաշխարհայնացման ծուղակը, որ այդպես էլ թույլ չեն տալիս օգտվելու ապաքինում-մոռացումից: Վեպի էջերը կրկին հիշեցնում են անցած ճանապարհների խաթարումները, մատնացույց անում խիզախում և պայքար: Փոխվել է նաև Նոր Արեշի ժողովրդագրությունը. նախկին «ախպարստանը» վերածվել է խայտաբղետ կազմով վերաբնակիչների՝ իրարից էՀ ավելի օտարված մարդկանց բնակատեղիի: Հնաբնակների հերթական մահը ավելի է պակասեցնում թաղի գունաշարը, որն ըստ էության անհամեմատ բազմագույն ու ինքնատիպ էր, քան տեղացիներինը:

Գրողը հետևողական է իր պատումի էջերում, նրան չի կասեցնում մերօրյա կյանքի բարդությունն ու հակասականությունը, հրաբխի հարևանությամբ ապրող մարդու ողբերգությունը, իր մեջ սպառվում են արդեն հույս ու հավատի վերջին պաշարները, որ գիտակցում է շուրջբոլոր հետևողականորեն հյուսվող սարդոստայնները և այդուհանդերձ սպասում է հրաշքի, որի միակ տերն ու արարիչը ինքն է միայն՝ Հերոս Հայը:

Վեպի կարևոր արժանիքներից է կերպարների խոսվածքը, որի հիմքում մեր հրաշք լեզուն է՝ արևմտահայերենը՝ իր տարատեսակ բարբառների նյուանսներով, և որոնք շեշտում են հումոր, քնարականություն, սրամտություն, կյանք ու կենցաղի անցելասույզ ձևեր: Կենտրոնական թեման, որ անցնում է ողջ վեպի միջով, 20-րդ դարասկզբի հայության մեծ ողբերգությունն է իր հարատևող հետևանքներով ու հոգեբանական վայրիվերումներով, որոնց ժառանգն ենք մենք և տխուր դասերի ականատեսը:

Անահիտ Գ. ՀԱԿՈԲՅԱՆ
Բան. գիտ. թեկնածու, դոցենտ

ՍԵՐՆ ԻԲՐԵՎ ԵՐԿՐՊԱԳՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

Արա Նախշքարյանի սիրերգությունը

Սիրո ճանապարհը հոգու պատմություն է:

Ինքնաճանաչման պատմություն: Ոչ մի տեղ մարդկային հոգին այնքան բաց ու ազնիվ չէ, որքան սիրո մեջ, և ինչպես գրում է Ուոլթ Ուիթմենը. «Եվ նա, ով քայլում է գեթ մի վայրկյան անսեր, նա իր սեփական թաղմանն է գնում, սեփական պատանքով փաթաթված»:

Արա Նախշքարյանի սիրերգությունը, կին աստվածությանն ուղղված երկրպագության խոսք է՝ անմնացորդ ինքնայրում: Սիրային ապրումի բոլոր հոգեվիճակներում՝ բռնկուն սեր, բերկրանք, վայելք, սառնություն, մենություն, ցավ, կարոտ-միավորողը սիրո անփոխարինելիությունն է, նրա ամենազոր ուժը, հարության մշտանորոգ հույսը: Իր սերը Վահագնից ու Աստղիկից սերված ծիսակատարություն է, նույնքան անանձնական, որքան անձնական: Հանուն սիրո արժե նորից ծնվել, այն էլ ծածուկ.

Կծնվեմ նորից, հա, հա, կծնվեմ
Թաքուն կծնվեմ, որ մահը չզգա...

Այս գրքում համանիշ են ապրելն ու սիրելը: Սիրո շնորհիվ է տունը վերածվում տաճարի, երգը՝ օրհներգության: Փոխվում է անգամ բիբլիական խնձորի խորհուրդը՝ ազատելով մեղքից այն միտում է դեպի անաղարտը՝ նույնացնելով Եվային, Լիլիթին, Աստղիկին իբրև կին, որ արժանի է երկրպագության:

Տուր ինձ խնձորը մեղքի մոռացման...
...Տուր ինձ խնձորը սիրո ապրումի
Կարմիր խնձորը խորհրդով վերին...

Պոետը կարող է ճախրել նաև մի թևով.

Ճախրելու համար մի թևն էլ բավ է,
Երազի համար քունն էլ հերիք է,
...Մոմերն հանգցրեք, իմ լույսն ինձ բավ է...

Ներքին լույսից է ծնվում բանաստեղծությունը, և յուրաքանչյուրիս հոգում կարող է նույնքան պայծառ արև ճառագել, որքան երկնքում: Սերն է այդ արևը.

Երբ քեզ սիրեցի, դեռ արև չկար,
Դու էիր հոգուս Արևը միակ,
Երբ քեզ գրկեցի, դեռ լուսին չկար,
Աստղերը չկային, դու էիր գրկիս...

Արդարև, ի սկզբանե Սերն էր: Սերը իբրև ծնունդ, մահ և հարություն համահունչ բնության օրենքներին՝ լուսաբաց, մայրամուտ, գիշեր, լուսաբաց և այսպես անընդհատ ու անվերջ:

Ամեն օր մթին՝ մենք մահանում ենք
Եվ ցայգալույսին հառնում վերստին,
Ամեն օր մթին մենք ավարտվում ենք,
Կրկին սկսվում վաղորդայն լույսին...

Պոեզիայի թղթե երկինքը վանող է, բանաստեղծը պատռում է այն ու վրձնում մի նոր՝ իրենց երկուսի սիրո երկինքը՝

Ես պատռեցի հոգուս թղթե երկինքը մով
Մի նոր երկինք վրձնեցի,
Ուր դու էիր, ու ես էի այնտեղ միայն՝
Տիեզերքը մեր անսահման...

Գրքում սերը իդեալականացված է՝ ի հակադրություն արդի աշխարհում արդեն սովորական դարձած մարմնական առևտրի: Բանաստեղծն ստեղծում է յուրօրինակ մի դրախտ, ուր իշխում են ժպիտն ու գարունը, ուր տխրությունը ապրողներին չի վերաբերվում.

Տխրությունդ դու թող դրսում ու ներս արի...
Այստեղ խինդ է ու ծիծաղն է այստեղ ծփում...
Տխրությունդ տուր մեռածին...
Ու շուտ արի Անմահություն...

Մեռյալների տխուր ստվերները Անդրաշխարհից ելք չունեն: Եվ միայն խինդ ու ծիծաղն է Անմահություն շնորհում նրան, ով սիրված է, ով ժպտում է, երբ լեցուն է սիրով:

Ժպիտն օգնում է սիրած էակի մեջ գտնել իրենը.

Խնդրում եմ ժպտա
Ժպտա, որ ասեմ
Քո մեջ ինձ գտա...

«Մեզ վեր է տանում հավերժ կանացին»: Գերմանացի հանճարի խոսքին ունկնդիր Արա Նախշքարյանն ստեղծում է հավերժ կանացիի իր իդեալը: Սերն ուժեղ է մահից, ուստի և, պետք չէ հավատալ մահին, երբ կողքիդ է սերը: Երբ իրականություն է Հարությունը: Երբ իրականություն է նվիրումը իբրև կարողության մեծագույն արտահայտություն: Բացարձակ նվիրումը, որ Սերն է: Ամենուր, և ամեն ինչում:

Արա Արթյան
Բանաստեղծ, գրականագետ, թարգմանիչ

«ԻՄ ԿՅԱՆՔԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է ԻՐ ԿՅԱՆՔՈՎ ԱՊՐԵԼ» ԿԱՄ «...ՀՈՐԻՆԻ՛Ր ԻՆՁ»

(Արարատ Մկրտումյան, Մի հայրենիք ավելի)

«Եվ տող առ տող թող հեկեկան պոետները անիրական ցավի դիմաց...»:
Արարատ Մկրտումյան

«Ծանրացող արյան» ոգի և ուժ կա, որ ոչ մի այլ բառով չես բացատրի: Եվ իսկապես գտնված է նրան բնորոշ միակը՝ այնքան մեծ ու այնքան էական, որ թվում է՝ ձշմարիտ՝ այն ամենևին էլ սեփական ներսում չէ, այլ ինքը՝ հեղինակն է մի տեսակ ոլոր-մոլոր շրջապատում իր ներսում կարևորին՝ արյանը, հողե՛ արյանը՝ քունքերի մեջ «զարկահոսող»: Գտնված է բառը, գտնված է հողի և արյան կշռույթները հավասար նժարների բերող բառույթ-շղթան՝ ծանր և մեծկշիռ: «Այս է մարմինն իմ, առե՛ք ու... հանե՛ք արյունը միջից, // Հանե՛ք ու տարե՛ք ուրիշին ընծա...»: Ծանր է տողը հոգու ձիչի պես, որ տանում է չգնդվող մի թախծի ևս՝ ի լրումն կամ ի հակակշիռ այս ամենի. չէ՞ որ միայն արյուն չէ, ձակատագիր է, խաչ այլատեսակ և օղապարան, որ պիտի կրել ամբողջ կյանքում, և «...գրողի ծոցը, թե օղապարանն այդ՝ մի օր իր երգը ինքը կհորինի»: Մեկ թափով արարված խոհ-գործեր են՝ գրողի իսկ ծանրացող արյամբ ոսկևորված: Իսկ ասելիքը ծավալուն է՝ սկզբի ու այսօրվա և վաղվա իսկ մտքերում կիսվող-ամփոփվող, իսկ ասելիքը բազմաձալք է՝ արյան ծանրությունից ու այն թեթևացնելու քարակարկառ մտքերից անդին, ինքն իրենից դուրս ու ինքն իրենից հեռացող: Լողում են պատկերները՝ մերթ ծանրաշարժ, մերթ՝ թեթևասահ՝ անկախ կամ ի հեձուկս ծանրացող արյան: Բանաստեղծության թողած ծանրությունը մտախոհ լռությամբ է արտահայտվում միայն: Իսկ «Ծանրացող արյան» և գոցվող «Դռների» արանքում, այն է՝ «մեր ներսի երկնքում և հետո երկրում այս երկնքի, և հետո երկնքի ու երկրի արանքում»՝ կինը, սերն ու անսերը, և դռները՝ փակվող, հոգնության, գրկաչափ ու շնչահեղձ կյանքը, որ տրվել է ակամա, և կարծ է հիրավի, բայց կա լույսը, ու «Տե՛ր աստված, ո՞վ է այս մանուկը, որ այսպես դեպի մեզ է վազում...», և կա ծաղկունքը՝ փակվող դռների այն կողմում: Իսկ մերկ մատներով սեր խոստովանելուց հետո, ամենավերջում տրամաբանական չէ՞ արդյոք շարունակ կրկնվող՝ «Ախր ես մերկ եմ եկել այս աշխարհ, // Ինչո՞ւ եք ուզում հագնված գնամ» ռիթմը:

«Ծանրացող արյունը» ձգվում է բանաստեղծությունից բանաստեղծություն՝ մերթ գոհունակ, մերթ դժգոհ ու ամբարիշտ, բայց՝ հոգեշահ մշտապես: «Եվ հետո կընծայենք մեկմեկու // Մեր արյան մղձավանջը վայրի, // Եվ թող նա թեկուզև այս երգում // Թանձրանա, խաղաղվի ու մարի»: Ապա՝ «Հավատամ, թե հեքիաթ է պահած // Մաշկի տակ տրոփուն այս ժամի»: Մի՞թե փոխոխելի չէ երանգը, թե՝ «հավատա՞մ»... Այս է՝ «Ճակատագիր էլի մեկի համար». ձակատագի՞ր, կինն ու ձակատի գիրը՝ վսեմ, անսուտ, և գոհություն՝ տեսած ու ապրած ամեն մի առավոտի համար: «Կասեմ՝ գնանք, աղջի՛կ, մեր ծիծաղի փշրուն արցունքն ակոսելու», «... որ աղջիկը թևաբախման թախիծ ունենար թռչունի աչքի մեջ պահած...»: Եվ ձակատագիր, որ գրողին ապրեցնելու փոխարեն և կյանքի փոխարեն Երգ է տվել: Երգն ու արյունը գիրկընդխառն սահում են էջ առ էջ. անգամ տերունական աղոթքի առինքնումները նրան են ուղղված, թե՝ «Երգ մեր, որ երկինս ես և երկիր, և եղիցի անուն քո, ամենուր, ամենուր...»:

«Ժամը գիշերվա էր, և աչքալուսանքի պատուհանները բաց էին անձրևի դեմ, // Եվ ոչ ոք չգիտեր, որ խալ կա ափի մեջ նորածին քո որդու... Ժամը հանդիպման էր, և մութի քունքերում անխոս տրոփում էին երկու մարմին»: Սիրո, մաքուր խոնջանքի ու լույս-երգեցիկի երանության, բաժանումի, հիշողության և հույսի մի ինքնատեսակ կորագիծ է, որ հաղթահարվում է պրկումով, բառ-հևքով, անպարագիծ հուշի ընդվզումով: Իսկ սերը նրա՝ աղջիկ, աղջիկ պարզապես՝ որպես հասարակ ու անիմանալի մի կոչական: Եվ քիչ հետո. «Աղջի՛կ, // բեր անունդ սեր դնենք, // թե չէ մեղք է տղան, // թե չէ շատ է հոգնել // լույսի և քարի արանքում»: «Եվ ես ասում եմ՝ աղջիկ, որ ձոնք ունենա փողոցը թեթևակի»: Ահա սերը վսեմագույն: «...Իսկ հիմա սեղմիր գլուխս կրծքիդ, // իսկ հիմա ասա, որ ձիշտ եմ եկել, // որ չեմ շփոթել ո՛չ հասցեն, ո՛չ քեզ, // որ վաղը, ափսոս, ուրիշ կլինեմ, // որ վաղը, ափսոս, ուրիշ կլինեմ. // իսկ հիմա՝ սիրի՛ր, // գինով եմ մի քիչ»: Անշուշտ ահա նաև մկրտումյանական՝ սիրո բանաձևերը. «Ճակատագրվել է իմ արյունը քեզ», «Քո մասին է այս կարոտը դառնում արյուն», «...Ապրի՛ր, թե չէ մարդիկ դժվարությամբ կտանեն իմ ձայունը ծառերի միջով»: Ամեն ինչ ասված է գուցե, բացի միայն սիրո չափումներից՝ անսահմանությունից անսահմանություն՝ մինչև Լույսը վերին: «Այդ ես չեմ. // քո սերն է // քո ձեռքից բռնած // տանում դեպի լույսը»:

«Դու կռվեցիր բոլոր առավոտների համար, և բոլոր առավոտները եղան քոնը»,- իր խոսքերը՝ գագաթնահայաց ուղղված իրեն: Եվ մնում է թանձրացող մի գունդ թախիծ՝ թավալգլոր սլացող տրամադրությամբ, մանավանդ, երբ օրերի հեռավորությունից հասկանալի է դառնում, որ լույսի հեղինակը վկան չի եղել իր լույս դառնալու վեհ ակնթարթի, և սարսուռ լուսաբացը երևում է իրենից դուրս՝ այնկողմյան առավոտի մեջ: «Փակի՛ր աչքերդ, բացի՛ր ափերդ, հիշի՛ր երազը, // Երեկն անցյալ է, այսօրը՝ կիսատ, իսկ վաղը՝ հեռու, // Մի քիչ ափսոս է, մի քիչ հեքիաթ է, եղածը այս է...»:

Թվում է՝ ամեն հերթական բանաստեղծություն թռիչքի վսեմագույն գագաթն է, ի հեձուկս կյանքի

բեկբեկումների՝ հաղթագտած գագաթը գրողի սիրելի Լեռան: «Մռայլ, մռայլ, մռայլ քարեր, // Ծռայլ, շռայլ, շռայլ արև // այս դարերի վրա, // այս ամենի վրա՝ վերից...»: Եվ նույն բացառիկությամբ՝ հայրենիքի երգը. «-Մա՛յր, ես ինչո՞ւ եմ ծնվել: // -Որպեսզի մի հայրենիք ավելի ունենա այս երկիրը, // Որդի՛ս»:

Գրքում ներքին բաժանումները պայմանական են. ամենուր հար և նման զգացողություններ ու ապրումներ են: Ինքը՝ Արարատ Մկրտումյանը, հույզի, ապրումի, պատկերի ու վեհ տառապանքի կոչնակն է ասես, որ կարող է «բառերին ներարկել սարսուռներ սիրո», որից հետո մնում է «անտես տխրության վարագույրը»:

«...Ինչ-որ բան է քո մեջ թավալգլոր շնչահեղձվում թաքուն, // Որը ձիչ կդառնա ճաքճքած շուրթերին առավոտի»: Պատկերները նրա՝ ընդհանրապես, և ինքնատիպ բառաստեղծումը, որոնցով միաժամանակ է ներկայանում՝ «հրկիզումի մոխիր՝ փյունիկ երգի կարոտ», «սարսուռ ուրցահոտով լցված լուսաբաց», «կարոտի և անլրջության կապույտ սիզախոտ է առավոտը ծամում», «ծույլ-ծույլ մակարդվող տարակուսանք է օդում համրանում», «ծառը իր ստվերն է պարզաջրում պղտոր գետում», «մի ցուրտ փղձուկ մեր մեջ գնդեց փշրապակու խշրտյունով»: Նորաբանությունների շարունակական շարքը՝ հուշափաթիլ, հիազարհուր, գոյադաշնություն, ձայնագոչել, հրապեծուն և այլն: Բոլորովին ուրիշ մի աշխարհ է՝ մկրտումյանական, բացառիկ ու անկրկնելի, զգայական, առնական ու վեհորեն տխուր. թվում է՝ հենց այդպես պետք է լիներ այդ տարիքում հոգևոր այդքան հասուն բանաստեղծությունը՝ մեծ արժեք, մեծ կշռույթ՝ կյանքի «ելուվարումներում» ապրելու և ապրումի մասին: «Արածդ ի՞նչ է չարածիդ դիմաց... // քեզ պետք էր արդեն լեռների կարծր սառույցներն զգալ կրակներիդ տակ, // իսկ դու դեռ նոր ես քարտեզագրում // երեկվա անցնելիք ճանապարհը քո: // Ուշանում ես... // Ծտապում ես... // Կանգ առ, բավ է...»:

Հիրավի սա է սկիզբը, և սա է «նախաբառը»՝ նախնական ու մաքուր, առավոտի պես ճգնավոր: «Իսկ մենք ճանապարհ ունեինք գնալու, // և միշտ առավոտ էր՝ անընդհատության զնգուն պատրանքը // իր խորքում պահած. // և դարձդարձիկ էր լույսը տագնապուն, // և գովելի էր ուժը նախնական, // և մենք եկել էինք՝ // բոլոր ճանապարհները սկսելու մեզնից, // բոլոր ճանապարհները շարունակելու մեզնով...»: «Մենք սիրում ենք կյանքը, // Մենք սիրում ենք երգը, // Մենք սիրում ենք սերը: Մի ամբողջ՝ ապրող գրական սերնդի ժամանակագրություն, «Մի սերունդ... ներկոտ ու կավոտ, կավոտ-թանաքոտ մատներով մի սերունդ»՝ Աշոտ Ավդալյան, Ավետիք Դարբինյան, Տիգրան Բալոյան, Անահիտ Հարությունյան..., բոլորը՝ մկրտումյանական՝ «Ռոզի կաֆեի զավակները»՝ հար ներկա՝ այդ սերնդի մեջ և ամբողջ ժամանակաշրջանի՝ առաջին հերթին ինքնատեսակ ձեռագրով և թողած էլի՝ ինքնատիպ-անավարտ կյանքով ու ժառանգությամբ: Եվ ամեն մեկն իր բաժին ճակատագրի փերթերով թե բեկորներով նույնքան տարբեր իր տողը բերեց գրականություն՝ ապրումի, զգացմունքի ու զգացողության, երազների հարուստ ու վառ գունապնակով, շնչող և ազդու: Ահա նրանք՝ հաղթարշավի ելած, որ տասնամյակներ անց էլ՝ վեր ժամանակային համրանքներից, գրականության կապույտ անհորիզոն հորիզոնին պիտի փայլեն ձեռք ձեռքի, անուն առ անուն, և պիտի խենթանա խենթությունն ինքը՝ որպես գագաթը ապրումի, լռության, բանաստեղծության փառաշուք հանդեսի: Ինքնատեսակ խրոնիկա՝ ձշգրիտ ժամանակի և տարածության մեջ, և միաժամանակ դուրս բոլոր ժամանակային կույր չափումներից, կյանք ու ապրումներ, որ, իր խոսքերով, միայն աստված գիտի՝ «այստե՞ղ, թե՞... մտքում» էր: Գրական այդ սերունդն էր այդպիսին՝ սիրել, վայելել, ձչալ... Մինչև վերջ, ցմրուր, անմնացորդ ծախսելով, նվիրվելով ինքը, երազելով՝ հոգսի մեջ՝ անհոգ, կարոտով, սպասումով, հավատով, միով բանիվ՝ բոհեմիկ-վարարուն իր տեսակով: «Մենք միայն այսպես ենք սիրում: // Ուրիշ կերպ սիրել չենք կարող, // Հենց այսպես՝ խենթորեն, խելառ, // պատրաստ՝ արևներ նվիրելու իրար // լոկ մի ժպիտով...»:

Ի վերջո, ի՞նչ էր երգում նա՝ Երգը պաշտող բանաստեղծը: Հոգու և հույզի ինչպիսի դաշն, սիրո և կորցրածի ցավի ինչպիսի համաձույլ, և այս ամենը՝ մարդկային, իրական ու հասկանալի: Երևույթներ, իրադարձություններ, որոնք բանաստեղծը կարող է գնահատել միայն սեփական դիտանկյունից, մեկ՝ կողքից, մեկ էլ՝ պարզապես «Աստծո միամտությամբ», թե՝ «Եվ հողագունդը կոչվելու է իմ անունով, որովհետև իմ անունն է ՍԵՐ»:

«Դու կհասցնես մեռնել, հիմա ապրել է պետք...»,- միտքն առաջ է տանում հեղինակը: Ընդհանրապես խոհական, ոգեղեն գործեր են՝ մարդու մասին՝ մեծ հաշվով, իր կյանքի մասին՝ ի մասնավորի, և իր ճակատագրի մասին՝ վերուստ՝ կարճ կյանքի մեջ՝ հզոր կենսահյութի վեհ առկայության հստակ բանաձևով: Եվ երբեք նրա մտորումներին սահմանափակումներ չկան դրված, բայց և մշտապես՝ արարում առ արարում, նրա շունչը միտվում է դեպի լռությունը, մթությունը, դեպի ինքնամաքրման վեհությունը, վերջին լույսն ու վերջին շունչը դեպի, և, ներքին մի նախազգացումով, դեպի գերեզմանափորի արվեստը՝ թե՛ վերևի, թե՛ հողի նկատմամբ ինքնատեսակ ահով շաղախուն: Ինչո՞ւ: Պատասխանը՝ իր բառերով թերևս. «...որ ձգվի՜, ձգվի՜ ճանապարհը, անհայտությունից դեպի վախ ու հիացմունք և փոշոտ, և հոգնած կողերով քսմսվի մեր թրջված քրքիջի պատերին»: ...«...Ե՜րգ մեր-Տե՛ր մեր, // որ յերկինս ես և յերկիր, դիմանկարիր... մոխրակարմիրով, // բայց հիշեցրու նորից, բայց հիշեցրու, // որ մենք ծնվել ենք և ապրելու համար, // և ապրելու համար, // և ապրելու համար: // ԱՄԵՆ»:

Ժողովածուն՝ ծայրեծայր պիրկ, ինքն իրենից վեր, բարձրաթռիչ, որ հավասարվում է վսեմ ու բարձր... Մահվան սարսուռի: «Ողորմյա՛, Տե՛ր, բանաստեղծին, նա վերջապես հասավ իր Լեռանը»:

ԿԱՐԻՆԵ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
Բան. գիտ. թեկնածու, դոցենտ

ՀԱՅԱՑՔ՝ ԴԱՐԻ ԲԱՐՁՈՒՆՔԻՑ

ԽՍՀՄ և ՀԽՍՀ ժողովրդական նկարիչ, միջազգային մրցանակների դափնեկիր Մարիամ Ասլամազյանը ապրեց ուղիղ հարյուր գարուն:

1906–2006 թթ.՝ փորագրված է Կոմիտասի անվան զբոսայգու՝ հայ մեծերի Պանթեոնում հանգչող գեղանկարչուհու տապանաքարին:

Եվ նրան երկարակեցություն պարգևեց բոլոր բարիքների մայրը՝ աշխատանքը...

Ծնվել է Ալեքսանդրապոլից (Գյումրիից) ոչ այնքան հեռու, Բագրատունիների արքայանիստ Շիրակավանում (նաև՝ Երազգավորս), Ախուրյան գետի կանաչավետ, գեղատեսիլ աջափնյակում (այժմ սահմանի թուրքական կողմում է...):

Ջրաղացատեր և բազմահմուտ մեխանիկ Արշակ Ասլամազյանի շեն, հյուրասեր օջախում, ինչպես հեքիաթներում, հասակ են առել ընտանիքի յոթ աղջիկն ու միակ որդին, որոնք, բոլորն էլ բարձրագույն կրթություն ստանալով՝ դարձել են առաջատար մասնագետներ, երկրի ու ժողովրդի համար արժանավոր մարդիկ: Նրանցից Մարիամն ու Երանուհին հայտնի գեղանկարիչներ դարձան: Վաղուց անտի նրանց շատ ստեղծագործություններ զարդարում են երևանյան, դրեզդենյան, տրետյակովյան և աշխարհի ավելի քան քառասուն թանգարաններ ու պատկերասրահներ: Որպես գեղագետ քույրերի սրտի վաղեմի փափագ՝ նրանք իրենց ստեղծագործությունների մեծագույն մասը՝ շուրջ 660 գեղանկարչական և խեցեգործական աշխատանքներ, նվիրաբերվեցին Լենինական (այժմ՝ Գյումրի) քաղաքին, ուր 1987 թվականից գործում է «ԱՍԼԱՄԱԶՅԱՆ ՔՈՒՅՐԵՐԻ ՊԱՏԿԵՐԱՍՐԱՀ»-ը:

Իր արգասավոր կյանքի 95-րդ տարում, վրձինը գրիչով փոխարինելով, Մարիամ Ասլամազյանը Մոսկվայում, ցավոք սրտի քիչ՝ ընդամենը 500 օրինակով, լույս ընծայեց «ԿՅԱՆՔԻՍ ԴԱՎԹԱՐԸ» ինքնակենսագրական հուշապատումների գիրքը (ի դեպ, մեկն էլ նկարչուհին ջերմ ընծայականով ժամանակին ինձ է նվիրել): Այն, իրավամբ, հայացք է կյանքին՝ դարի բարձունքից...

«Դավթարը» այսօր էլ ընթերցվում է մեծագույն հետաքրքրությամբ, քանզի հուշապատումների գիրքը բովանդակում է 20-րդ դարի պատմական-ճանաչողական, հոգևոր-մշակութային շատ ուշագրավ նյութեր:

Առանձնապես հարուստ ու գունեղ է հեղինակի բազմաբեղուն, մեկդարյա կյանքի ճանապարհին հանդիպած անվանի մարդկանց «պատկերասրահը»՝ Նիկողայոս Մառ, Նադեժդա Կրուպսկայա, Ակսել Բակունց, Ավետիք Իսահակյան, Մարտիրոս Սարյան, Սերգեյ Մերկուրով, Վերա Մուխինա, Արամ Խաչատրյան, Ինդիրա Գանդի, Վազգեն Վեհափառ... Ճշմարիտ է՝ թեև նրանք իրենց հարուստ կենսագրականներով հանրաճանաչ երևելիներ են, սակայն «Դավթարի» ընթերցողը, հեղինակի ընկալմամբ ու մեկնությամբ, նշանավոր այդ մարդկանց ճանաչում է նորովի:

Մ. Ասլամազյանի «Կյանքիս դավթարը» ռուսերեն հրատարակված գրքից, իմ թարգմանությամբ, ստորև ներկայացնում եմ «Թուրքերը Ալեքսանդրապոլում. 1918, 1920–1921 թթ.» պատումը: Այստեղ հեղինակը սրտի կսկիծով է վերհիշում հայրենի քաղաքը գրված բարբարոս զավթիչների հրեշավոր, անմարդկային վայրագությունները, դեպքեր, որոնց ականատեսն է եղել նուրբ, զգայուն հոգի 12–ամյա աղջնակը...

Մեկ հավելում ևս. սույն հրապարակումը, կարծում եմ, ոչ միայն պատմական-ճանաչողական արժեք ունի, այլև այն սթափության և զգոնության անուղղակի կոչ է նախևառաջ հայ ժողովրդի այն հատվածին, որը մեր անցյալի արյունոտ պատմության դասերից դեռևս ճիշտ հետևություններ չի արել և դեռ հավատում է... «լավ» թուրքին... Նույն Գյումրիում փորձում են փակել ռուսական ռազմաբազան, որի առկայությունը, արդարացի լինենք, հայ-թուրքական սահմանն անխախտ պահելու երաշխիքն է եղել և կա...

Մինչդեռ թուրքը միշտ էլ թուրք է... «Ու հեռու է մինչև մարդը իր ճամփան» (Հովհ. Թումանյան):

Սերժ ՄԱՆՈՒԿՅԱՆ



Մարիամ ԱՍԼԱՄԱԶՅԱՆ

ԹՈՒՐՔԵՐԸ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼՈՒՄ. 1918, 1920-1921 ԹԹ.

Իմ հիշելով՝ թուրքերը Ալեքսանդրապոլում եղել են երկու անգամ: Առաջինը 1918 թվականին էր, երբ մենք ընտանյոք տեղափոխվեցինք Թիֆլիս: Երկրորդ անգամը 1920-ին էր, քաղաքի վրա կրկին սև ամպեր կուտակվեցին: Թուրքերը Կարսը առնելուց հետո անկասելիորեն շարունակում էին հարձակումը, իսկ մեր բանակն այնքան արագ էր նահանջում, որ ժողովուրդը տարհանվել, հեռանալ չհասցրեց:

Ուշ աշուն էր, ձյունախառն անձրև էր տեղում, ամենուրեք՝ ծնկահաս ցեխ: Փախստականները, գումակը ու նահանջող բանակը իրար էին խառնվել: Սոված ու մրսած մարդիկ անիծելով ու արցունքներով աձապարում էին՝ իրենք էլ չգիտենալով թե ուր...

Հարևան գյուղերից եկած փախստականներով լիքն էր մեր տունը: Քաղաքի մատույցներում արկեր էին պայթում, այրվում էին պահեստները: Մարդիկ ջարդում-փշրում էին կողպեքները և կողոպտում խանութները: Փողոցներում դասալիքների դիակներ էին՝ վրանները փակցված «հայրենիքի դավաձաններ» մակագրությունը:

Հայրս դեռևս տուն չէր եկել ջրաղացից, իսկ սպասելն այլևս անհնարին էր: Հորեղբայրս մորաքրոջս ու ավագ քույրերիս հետ վձռեցին հեռանալ քաղաքից, քանզի չէր կարելի դեռատի աղջիկներին թողնել թուրքերին...

Հայրիկին ուշ գիշերով բերեցին տուն՝ քառասուն աստիձան ջերմելիս: Նրան բարեկամներն էին վերցրել կես ձանապարհից: Այսպիսի վիձակում մեր տարհանվելն այլևս հնարավոր չէր, և մենք մնացինք...

Ամբողջ գիշեր մարտեր էին ընթանում, և առատորեն անձրևում էր: Լուսադեմին ամեն ինչ մեկեն խաղաղվեց, և մեռելային անդորրում հեռուներից սկսեցին մեզ հասնել փողային նվագախմբի հնչյունները, թուրքական ազգային օրհներգն էր կատարվում: Ծուտով երևացին նաև զորայուները: Արշավում էր թուրքական հեծելազորը, և այդ գազաններից յուրաքանչյուրը թամբերին մի-մի ցից էր ամրացրել, որոնց վրա խրված էին սպանված հայերի կտրված գլուխները... Ամենաահավոր ու նողկալի պատկերը մեծահասակ կնոջ գլուխն էր, որի երկար-ձերմակ վարսերը ծածանվում էին քամուց: Հարբած ասկյարները իրենց հաղթանակն էին տոնում: Դա մի հրեշավոր, սոսկալի տեսարան էր:

Ամուր փակվել էին բոլոր տների դռները: Սակայն, միևնույն է, թուրքերը խցկվում էին ամենքի տունն էլ, ջարդում, փշրում կամ այրում էին գոց դռները, աղջիկներ էին պահանջում և հափշտակում ինչ որ տեսնեին: Սպանում էին ում ասես և որտեղ ասես:



Մարիամ Ասլամազյան
Սերժ Մանուկյանի դիմանկարը, 1977 թ.

Մարտ ամսին մայրիկիս մոտ կծկանքներ սկսվեցին: Նա միշտ տանն էր ծննդաբերում՝ երկարատև ու տանջագին: Ամբողջ գիշերվա խավարում տառապագին ցավեր քաշեց մայրիկը և առավոտյան լույս աշխարհ բերեց Թամարային՝ իմ յոթերորդ քույրիկին: Ինձ ուղարկեցին մեզանից ոչ այնքան հեռու ապրող մորաքրոջը կանչելու: Փողոցի անկյունում երկար հյուսքերով փախչող մի աղջիկ տեսա, որին հետապնդում էր թուրք ասկյարը: Դժբախտը շնչակտուր նետվեց դեպի դարպասը, սակայն նրա երկայն հյուսքերից ամուր բռնեց թուրք ասկյարը և քարշ տվեց դեպի իրեն. աղջիկը ճչում էր, աղերսագին օգնություն կանչում, բայց ոչ ոք չհասավ... Նույն պահին հանկարծ ինչ-որ մեկը ինձ ուժով դռնակից ներս՝ անծանոթ տուն տարավ: Պարզվեց, որ մերոնցից էր և նա ինձ անվտանգ տեղ թաքցրեց: Ես ընդամենը տասներկու տարեկան էի: Դրանից հետո ինձ այլևս ոչ մի տեղ չէին թողնում կամ ուղարկում, թեպետև ես դեռահաս, նիհարիկ և ոչ ուշագրավ աղջնակ էի:

Սերժ Մանուկյանը
Մարիամ Ասլամազյանի հետ

Մնացական ՄՈՒՐԱԴՅԱՆ

- Ուժեղ և հակիրճ արտահայտված մտքերը շատ են օգնում կյանքի բարելավմանը:
- Կարճ ասույթները մխրճվում են մարդկանց մտքի մեջ, արմատներ արձակում, ծաղիկներ ու պտուղներ տալիս և չեն դադարում ազդեցություն գործելուց:
- Իմաստությամբ, ուժով ու սրամտությամբ լեցուն գեղեցիկ ասույթները երբեք չեն մոռացվում: Նրանք հիշողության մեջ մնում են առհավետ:
- Մարդը մենակության մեջ մի աշխարհ է, աշխարհի մեջ՝ մենակություն:
- Երբ մեր կյանքում բնությունը լինի առաջին տեղում, մնացած ամեն ինչը կլինի իր տեղերում:
- Հնարավո՞ր է խուսափել մի բանից, որ Բնությունն է ի վերուստ սահմանել:
- Երկնքի ցողը կարծես օրհնանք լինի բնապաշտի համար:
- Ամենալավ կոչումը լավ մարդ կոչումն է:
- Արյունը և՛ շատ քաղցր է, և՛ շատ դառը:
- Բնության նյութը ավելի է գեղեցկանում, երբ մատուցվում է մտքի և վառ երևակայության թռիչքով:
- Հավատը մարդուն թևեր է տալիս:
- Աղոթքը մի երևույթ է, որտեղ միաձուլվում են շունչը, միտքը, բառը, ներքին ուժն ու աուրան:
- Մարդու տեսակը մեկն է. իրողություններն ու ընկալումներն են տարբեր:
- Յուրաքանչյուր մարդ պետք է իր բաժին բեռը տանի, հակառակ դեպքում ինքը կդառնա բեռ:
- Մարդը որոշում է իր անելիքն ու ճանապարհը, սակայն Բնությունն է ուղղորդում նրա քայլերը:
- Խիզախ Մտքի նշանը ամուր ձեռքն է:

➢ ԱՐՁԱԿ

Սպարտակ Ղարաբաղցյան
Ապաշխարանք 1
Կարանտին 1
Հուշ 2
Իսակ Դային 2

Ծնորհիկ Ծահինյան
Մոսո Կնոն 3
Ձեթով գաթեն 4

Նեկտար Սիմոնի
Ադես ու հացը 5

Արիս Հայրապետյան
Խաղամոլը 6

Արմենուհի Մխիթարյան
Լենինականյան էտյուդ 8
Ճանաչել մեղավոր 9

Հրանուշ Սուքիասյան
Բախտախաղ 10
Անհոգության հրվանդան 10

➢ ՊՈԵԶԻԱ

Ավիկ Դերենց 11
Ռոզա Հովհաննիսյան 12
Սոնա Անտոնյան 13
Անդրանիկ Կարապետյան 14
Գագիկ Սարոյան 15
Ռոբերտ Եսայան 16
Սերգեյ Վարոսյան 17
Սամվել Մարգարյան 18
Վալերի Անանիկյան 19
Գևորգ Թումանյան 20
Լուսինե Աղաջանյան 21
Լևոն Բեժանյան 22
Հարություն Սարգսյան 23
Ստեփան Միքայելյան 24

➢ ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ

Պատվական Ղուկասյան - 90 25
Կարապետ Հովսեփյան - 100 27

➢ ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ

Դինո Բուցատի *(թրգմ. Գառնիկ Մելքոնյան)* 28
Մուհամմեդ Թեյմուր *(թրգմ. Դիանա Պետրոսյան)* 30

➢ ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Նոր Արեշի վիպասքը *(Անահիտ Հակոբյան)* 32
Սերն իբրև երկրպագություն և հարություն *(Արա Արթյան)* 34
«Իմ կյանքը շարունակում է իր կյանքով ապրել» կամ «...Հորինի՛ր ինձ» (*Կարինե Մարտիրոսյան)* 35
Հայացք դարի բարձունքից *(Սերժ Մանուկյան)* 37

➢ ԱՐՎԵՍՏ

Մարիամ Ասլամազյան 38

➢ ԱՖՈՐԻԶՄՆԵՐ

Մնացական Մուրադյան 39